


491-99-5

7-50

Получено

из архива
государственного
музея
Р. Бун. 1931р



491.542-5

7-51

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

04 MAY 2010

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բ. Մ Ա Ս

4-րդ հրատարակություն

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

F. U U-U

4-րդ հրահարանություն

1429517

2012 - CCRA

1931

3 6 1 6 4, 11, 5

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայոց լեզվի գործնական քերականութեան այս յերկրորդ մասը մեր աշխարհաբարի շարահյուսութիւնն և ամփոփում ու գլխավորապէս դասատուների համար և կազմված. ուստի ավելորդ չհամարեցի մի շարք կարեւոր լրացումներ անել 3-րդ հրատարակութեան համար: Քերականութեան յերկրորդական ու վոյ գործնական բնույթ ունեցող մանրամասնութիւններ աշակերտներին սովորեցնելն ավելորդ մի աշխատանք և. այդ մանրամասնութիւններն ուսուցչին են պետք՝ ընդհանրացումների ու գործնական յեզրակացութիւնների համար: Դասատուն, ուսումնասիրելով այդ մանրամասնութիւնները, աշակերտներին դիտել պետք և տա լեզվական այս կամ այն յերեվույթը, համապատասխան գործնական առաջադրութիւններ պիտք և անի, հետամտելով սոսկ գործնական մի նպատակ, այն և՛ աշակերտները յուրացնեն բառերի ներքին կապը խոսքի մեջ, բառերի կանոնավոր շարադասութիւնը յեւ համաձայնութիւնը, խոսքերի հարաբերութիւնը բարդ ասացվածի մեջ յեւ այս բոլորին գուզնութեց՝ լեզվի կետադրութիւնը: Զուտ այս գործնական նպատակների համար դասատուներն աշակերտներին կարող են ոգտագործել տալ զրքիս մեջ առաջադրված գործնական աշխատանքներն, իհարկե, վորոշ ընտրութեամբ, նայած առաջադրած նպատակին: Նման գործնական աշխատանքների համար փոքրիկ հատվածներ կարելի յե ընտրել նայել լեզվի աշխատանքի զրքից

Ներկայումս ուսսական քերականութիւնների մեջ տեղեց և նկատվում քերականութիւնը բառերի վրա հիմնելու, ձեւական քերականութիւն ստեղծելու: Ռուսաց լեզվի վորոշ առանձնահատկութիւններ (սեռերի հատուկ վերջավորութիւն, համաձայնութիւն ըստ սեռերի յեւ այլն) ղյուրացնում են այդ սկզբունքը կիրառելու գործը ուսսաց լեզվի քերականութեան համար: Հիմք ունենալով այդ, հոլովների խնդրում այս դասագրքի մեջ (Ա. յեւ Բ. մաս) կիրառված և հոլովը ձեւի վրա հիմ-

նելու սկզբունքը, ինչպես այդ Մ. Աբեղյանն և արել. այդ պատ-
ճառով յեվ կոչական. հայցական յեվ սեռական հոլովներն ըստ
ծեպի տեղ չեն գտել այս դասագրքի Ա. մասում, իսկ Բ. մա-
սում, ուր հոլովների ֆունկցիաներն են ուսումնասիրվում, այդ
մեռած հոլովները դրված են այն հոլովների կողքին, վորոնց
հոլանացել են ըստ ծեպի. այս արված է, նկատի ունենալով այն
դասատուներին, վորոնք հին քերականություններով են սովորե-
րել, յեվ վորոնց համար մինչև այսօր ել զարմանալի յե այդ
հոլովների ատրոֆիան: Վերջերս վրացական գրականության
մեջ ել են սկսել վրաց լեզվի հոլովները ճշտել յեվ ավելորդ հոլո-
վը դուրս գցելու առաջարկ անել... Այդպես է, քերականությու-
նը ձգտում է ազատագրվել պահպանողականության ստեղծած
դարավոր բալլաստից յեվ տվյալ լեզվի իսկական պատկերը տալ
Հոկտեմբերի մեծ նվաճումներից հետո անիմաստ բան կլինե՞ր
այդ ուղղությունը չընդունել:

Հար. Պետրոսյան

1929 թ. մարտ.
Ձեքեան.

VI. ԽՈՍՔԻ ԿԱՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Ա. ԲԱՌԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԽՈՍՔԻ ՄԵԶ

§ 70. Աշակերտը կարդում է:—Ձալենը հաց կերավ:—Յիս
յերեկ դպրոցում տեսա Մուկուչին:—Գնաց:—

Սրանք խոսքեր կամ ճախագասություններ են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Խոսքը կամ ճախագասությունը բառերով
արտահայտված միտք է, վորով մի առարկայի վորեմի հասկանիք է
վերագրվում. որ.՝ առակերսը կարգում է խոսքի մեջ առակերս կոչ-
ված առարկային կարգալու գործողություն կամ կարգալու հասկա-
նիք է վերագրվում, իսկ առակերսը ժիր է խոսքի մեջ առակերս ա-
ռարկային ժիր լինելու հասկանիք է վերագրվում: Խոսքն ամենա-
կարճ ձևով՝ մի բայ է (որ.՝ գնաց):

Առանց բայի խոսք չի կարող լինել. բայը կարող է չորվել,
բայց մեծով հասկացվել. որ.՝ հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հա-
զար ու մին,—ուր չի դրված ասա բայը, բայց մտքով հասկաց-
վում է, թե՛ հասկացողին մին ասա, չհասկացողին հազար ու
մին ասա:

Առանց բայի, ուրիշ տեսակի բառեր, ինչքան ել իրար չե-
տեից շարենք, խոսք կաղմել և վորոշ միտք արտահայտել չեն
կարող. որ.՝ յերեկ առավոտյան դպրոցում մի առակերս... բառերի
այս շարքը դեռ վորոշ միտք չի արտահայտում. բայց յեթե բա-
ռերի այդ շարքին ավելացնենք, որինակ, ընկավ, յերգեց, նվագեց
և այլն բայերից մեկը, այն ժամանակ վորոշ միտք կստացվի,
խոսք կլինի:

§ 71. Գնաց:—Վաչիկը գնաց:—Վաչիկը դպրոց գնաց:—Վա-
չիկը յերեկ դպրոց գնաց:—Մեր Վաչիկը յերեկ դպրոց գնաց:

Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին.

1. Ո՞վ գնաց. 2. Ո՞ւր գնաց. 3. Յե՞րբ գնաց. 4. Ի՞նչ Վա-
չիկ դպրոց գնաց:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Բացի բայից, խոսքի մեջ կարող են լինել նա-
յել լրացումներ, վորոնք այս կամ այն սեռակերպ լրացնում են
բայի կամ բայի լրացման իմաստը (Վաչիկը, չերիկ, դպրոց, մեր):

§ 72. Վաչիկը յել Սուրբիկը միասին գեպի տուն գնացին:—
Յես ու դու մնացինք:—Նա պիտի գար, բայց չեկավ:—Մենք գնա-
ցինք գեպի տուն:—Յեվ, ու, դեպի բառերը կապում են բառը
բառի հետ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Բացի լրացումներից, խոսքի մեջ կարող են
լինել յել կապակցական բառեր (և, ու, բայց, դեպի):

§ 73. Տո՛, Մինաս, հւր եյիր այսքան ժամանակ:—Վա՛յ,
Սահակ, շատ վատ բան է պատահել:—Տո՛, վա՛յ ձայնարկություն-
ները խոսքից դուրս մնացող և զգացմունք ցույց տվող բառեր են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Խոսքից դուրս, զգացմունք կամ կամք ցույց
սվող բառեր կամ ձայնարկություններ կարող են լինել, վորոնք,
խոսքը կտրելով, կարող են խոսքի մեջ բնկնել (տես § 62):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արագրեցե՛ք յել բառերի վե-
րելքը նշանակեցե՛ք բառերի սեռակը խոսքի մեջ՝ կարն ձեկով՝
բ=բայ, լ=լրացական բառ, կ=կապակցական բառ, ձ=ձայնար-
կություն:

Աշակերտները հավաքվեցին դպրոց: Վաչիկը և Հրանտը բա-
կում խաղում էին: Ձանգը տվին: Յերկուսը դես խաղում էին:—
Տո, Վաչիկ, դանդը տվել ե:—Յերկուսը ընկերները հեկարով ու շըն-
չասպառ վազեցին դասարան:

Յույց սվեք խոսք կապող բառերը, լրացումները, կապակցա-
կան բառերը յել ձայնարկությունները ստեղծված հասկացում:

Անլուսի վշվշշում և

Պոտոր շուրը Դերեդի,

Նրա ափին կանաչում և

Մենակ շիրիմի իգիթի:

Նրա շուրջը հեգ սիրունին

Թագացնում է վողբ ու լաց,

Ձայն է տալիս իր Սարոյին

Ու պտավում մոլորված:

Յեվ հոսում է գիշեր-ցերեկ

Արցունքն անբախտ աղջկա,

Բայց իր սիրած տղան չերբեք

Չկան, չկան ու չկան...

Վշվշշում է գետը—վնշ, վնշ,

Ու հորձանը և տալիս հորդ,

Ու կանչում է՝ «Ալբի, Անոն,

Արի տանեմ չարիդ մոտ...»:

—Անոն, այ աղջիկ, Անոն, տուն արի...

Կանչում է մայրը վերելից, կանչում.

Հուռ են ձորերը, լուռ են ահեղի,

Դուռման Դերեդի և պղտոր մոնչում:

Վուշ—վնշ, Անոն, վուշ—վնշ, քույրիկ,

Վնշ քու սերին, քու չարին.

Վուշ—վնշ, Սարո, վուշ—վնշ, իգիթ,

Վնշ քու սիրած սարերին...

(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, «Անուշ»)

Բ. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Լրացման սեռակերպեր

§ 74. Առակերսք գիրք է կարդում:—Նուրիկը մասխավ նկա-
րում է:—Առակերսք, գիրք, Նուրիկը, մասխավ գոյականները (տես
գլուխ V Ա.) խոսքի մեջ բայի գոյական լրացումներ են:

§ 75. Աշուրը արագ գնաց տուն:—Միքայիլը հիմա կգա:—
Սուրբիկը արդեն յեկել է:—Արագ, հիմա, արդեն մակբայները (տես
գլուխ V Ե.) խոսքի մեջ բայի մակբայական կամ պարագայա-
կան լրացումներ են:

§ 76. Կարմիր ու կապույտ մատիտներ գնեցինք:—Յես պա-
կերագարդ գիրք ունեմ:—Կարմիր, կապույտ, պակերագարդ ածա-
կանները (տես գլուխ V Գ.) խոսքի մեջ լրացումների ածական
լրացումներ են (լրացման լրացումներ):

ա. Բայի գոյական լրացումներ. անցողական յել
անանցողական բայեր

Ի. ՅԵՆՐԱԿ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ստեղծված բառ խոսքի մեջ գտեք,
թե ո՞վ կամ ի՞նչ է մի բան անում կամ լինում, հետևյալ ձևով.
որ.՝ Աշակերտը կարդում է—ո՞վ է կարդում:—Այստեղ մի բաժակ
կա—ի՞նչ կա:

Դյուղացիքն արտում բանը ձեռքին աշխատում ե—սիլ ե աշխատում:—Յերեկ Տիգրանը դպրոցի բակում բռնեց Հուսիկին:—Ահա ծագեց պայծառ արևը:—Մենք յեկանք տուն:

Ինքներդ խոսքեր կազմեցե՛ք յե՛կ ցո՛ւյց սիլե՛ք աճող կամ յեղող առարկան:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Աճող կամ յեղող առարկայի անունը խոսքի մեջ կոչվում ե յենթակա: Յենթական պարզում, բացահայտում ե բայի դեմքը: Որ՝ յերբ ասում ենք՝ գնաց, հասկանում ենք, վոր մի 3-րդ դեմքի առարկա (նա) գնաց, իսկ յերբ ասում ենք՝ Գուրգենը գնաց, իմանում ենք, վոր այդ 3-րդ դեմքի առարկան (նա) Գուրգենն ե, վոր գնալու գործողությունը կատարում ե:

§ 77. Աշակերտը կարդում ե: Աշակերտները կարդում են: Յես կարդում եմ, մենք կարդում ենք, դուք կարդում եք:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Բայը յե՛կ յենթական համաձայնում են քվով ու դեմով. յեզակի յենթակայի հետ դրվում ե յեզակի բայ, հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի բայ:

§ 78. Արտաշեսն ու Դրիգորը գնացին:—Թիֆլիսը, Բագուն, Բաթումը, Յերեանը Անդրկովկասի քաղաքներն են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Ցեքե նույն նախադասության մեջ մեկից ավելի յեզակի յենթականներ կան, բայը հոգնակի յե դրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Աստե՛կ բերված խոսքերում ցույց սիլե՛ք բայեր յե՛կ յենթականներ յե՛կ բացատրեցե՛ք նրանց համաձայնության շեղումներն ընգնանուր կանոնից:

Հինգ աշակերտ գնացին, տաս աշակերտ մնացին:—Կարդ ու կանոնը վերացել ե:—Լացն ու կոծը չի կտրվում:

Յո՛ւյց սիլե՛ք յենթակա լրացումներ.

Ամենի ձայնով յերկաթն ե խոսում,
պողպատն ե ճչում շաչյունով դողգոջ—
ե քաղմաղաղակ որերի լեզուն
հնչում ե այտեղ վորպես մարտակոչ:
Այս աղմկահույզ կյանքի խենթ լոցում
աչրում ե սիրտս սրբազան մի դող,
հուզում ե հոգիս մի վեհ հիացում,
ե սարսափելին թվում ե դուրթող...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Վերադարձ»)

§ 79. Մքնեց.—վորսում ե.—անձե՛կում ե.—խուսացավ.—հետք չի խոսվում.—այս մատիտով չի գրվում.—ասում են ուսին աղջիկ եր ինձ պես.—այնտեղ ելը փախնով կուսեն.—դուռդ ծածկիր, հարեանիդ գող մի՛ բռնիր:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Այն խոսքեր, վորոնց բայերի դեմքը անող կամ յեղող առարկայի անունով (յենթակայով) չի բացահայտվում, կոչվում են աճենթակա խոսքեր: Վոր կարող են արահայտվել՝ յեզակի յերբող դեմով (մթնեց), հոգնակի յերբող դեմով (ասում են), յեկակի յերկրող դեմով յե՛կ այլն: Աճենթակա խոսքեր կարելի չե փոխել յենթակայով խոսքերի—մթնեց=մութն ընկավ. հետք չի խոսվում=հետք խոսել չի լինում:

II. Կրող լրացում (կրող խնդիր)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Հետե՛կյալ խոսքերի մեջ լրացումներ դրե՛ք, վորոնք պատասխանեն ինչ կամ ումք հարցերին.

Մեղիկը կոտրեց... (Ինչը):—Հյուանը կտրեց...—Արշակն սպանեց... (Ում):—Արտուշը վերավորեց...—Հայկը կերավ...

Այդ լրացումները ցույց են տալիս, թե բայի գործողությունը յենթակայից ինչի կամ ում վրա յե անցնում, կամ բայի գործողությունը յենթակայից ինչը կամ ում ե կրում իր վրա:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Այն լրացումներ, վորոնք ցույց են տալիս, թե բայի գործողությունը յենթակայից ի՛նչը կամ ո՛վ ե իր վրա կրում, կոչվում են կրող լրացումներ կամ կրող խնդիրներ:

Յո՛ւյց սիլե՛ք կրող լրացումներ յե՛կ յենթականներ.

Մի լար, վորդիս, վոր հես լսում
ե՛կ մալրական քաղցր որոր.
յես մեծ կովի յերգ եմ հյուսում
որոցքիդ մոտ ամեն որ...

Դու լսե՛մ ես՝ այնտեղ, դրսում,
շնչ ու շառնչ, լսց, ու կո՛ծ,—
մեր արյունն ե այնտեղ հոսում,
նեղկամ ե՛ տուն, ե՛ փողոց...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Բանվորունս որորը»)

III. Բայերի սեռը

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Հետե՛կյալ խոսքերի բայերը կարո՞ղ են կրող լրացում ունենալ.

Արշակը ուրախ ե:—Դրիգորը քնում ե:—Սեբորը մեծանում ե

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Բոլոր բայերը կրող լրացում չեն կարող ունենալ:

Այն բայերը, վորոնք կրող լրացում ունեն կամ կարող են ունենալ, կոչվում են **անցողական բայեր** (*կտորել, ջափել, սպանել*):

Անցողական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, վորը յենթակայից անցնում է ուրիշ առարկայի վրա:

Այն բայերը, վորոնք կրող լրացում չունեն յեվ չեն կարող ունենալ, կոչվում են **անանցողական բայեր** (*լինել, քնել, հանգստանալ, նստել*):

Անանցողական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, վորը յենթակայից չի անցնում ուրիշ առարկայի վրա:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ներքեվ դրված խոսքերում ցույց տվեմք անցողական յեվ անանցողական բայերը, նրանց յենթակաները յեվ կրող լրացումները, յեթե կան:

1. Բանվորները սղոցով ծառը կտրեցին:—Սիրաքը պատուհե իր գիրքը:—Աշակերտները վազվզում են դպրոցի բակում:—Ջուրը հոսում է անուշ խոխոջելով:—Տիգրանը կարգադրում է Սիրուշին:—Հայկուշը պատասխանեց իր դասը:—Նուշիկը պարտեզում վարդ է քաղում:—Յես աթոռը մոտեցրի սեղանին:

2. Ասում ենք թագը բռնակալների,
պաշտում ենք շղթան տառապողների,
մեր արամբ թրջված գահերը բոլոր
պիտ ներկենք արամբ մեր վոսոխներին:

(Կ. Ա.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Լրացրեմ հետևյալ խոսքեր՝ ներքեվ բերած որինակի ձեովով:

Յես թե կարգում եմ և թե կարգացնում:

Յես թե դրում եմ և թե գրել եմ տալիս:

Յես թե ուրախանում եմ և թե... Թե յերգում եմ և թե...
Թե նկարում եմ և թե... Թե հանգստանում եմ և թե... Մեծանում եմ և... Կտրում եմ և... Ուտում եմ և... Փախում եմ և...
Կորչում եմ և... Իմանում եմ և... Ասում եմ և...

Կարգացնում եմ, ուտեցնում եմ, հագցնում եմ... և որանց նման բայերը, վորոնք ունեն ացն, եցն, ցն միջածանցներ, կոչվում են պատճառական սեռի բայեր:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Պատճառական սեռի կոչվում են այն անցողական բայերը, վորոնք ցույց են տալիս, թե յենթական ինքն չի

կատարում գործողությունը, այլ պատճառ է լինում, վոր մի ուրիշը կատարի բայի ցույց տված գործողությունը: *Որինակ՝ Սուրիկը կարգաց խոսքի մեջ կարգացողը՝ չենթական—Սուրիկն է, իսկ Սուրիկը կարգացեց Վաչիկին խոսքի մեջ կարգացողը՝ Վաչիկն է, իսկ Սուրիկը պատճառ է դառնում, վոր Վաչիկը կարգա:*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ներքեվ դրած խոսքերը փոխեցեմ ստորեվ ցույց տված ձեովով:

Յես ձեծեցի Մարկոսին—Մարկոսը ձեծվեց ինձնից:

Գրեգորը հաղթեց Մուկուշին—Մուկուշը հաղթեց Գրեգորից:

Միլիցիան բռնեց ավազակներին...

Հրդեհն այրեց շենքը...

Կարկուտը փնտսեց ցանքերը...

Փոթորիկը կտորեց ծառերը...

Սեթն սպանեց գողին...

Գնդակը ծակեց տախտակը...

Բաբը կտորեց բաժակը...

Այս որինակների մեջ առաջին շարքերում գտնվող խոսքերի մեջ չեղած անցողական բայերը **ներգործական սեռի** բայեր են, իսկ յերկրորդ շարքում գտնվող խոսքերի մեջ չեղած բայերը (վ միջածանցով)—**կրավորական սեռի**:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթական ինքն է կատարում, իսկ կրող առարկան այլ գործողությունը յենթակայից կրում է իր վրա:

Կրավորական սեռի բայերը, վորոնք ունեն վ միջածանց (*ջարդվել, սպանվել*), ցույց են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթական մի գոյական լրացումից կրում է իր վրա: Այսպիսի գոյական լրացումը **ներգործող ինքն** է կոչվում:

Ներգործական յեվ կրավորական բայերն իմաստով իրար հակառակ են, յեվ մեկով արտահայտված խոսքը կարելի չէ փոխել մյուսով, համապատասխան կերպով փոխելով բառերը:

Այն բայերը, վորոնք անցողական չեն (*վոչ ներգործական են և վոչ էլ պատճառական*), այլ կրավորական չեն, կոչվում են **չեզոք սեռի** բայեր (*գրում եմ, ուրախանում եմ, նստեցի, կանչվեց*):

Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, վոր վոչ յենթակայից է անցնում կրող լրացումի վրա յեվ վոչ էլ յենթական է կրում մի ուրիշ լրացումից, այլ յենթական ինքն իրեն լինում է մի վիճակի մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Վորոշեցե՛ք բայերի սեռը հետևյալ խոսքերի մեջ.

Ծառը կարվեց:—**Ծառը կտրեցին:**—**Ծառը կտրել տվին:**—**Յես կարդացի:**—**Յես կարդալ տվի:**—**Գիրք կարդացվեց:**—**Մենք հիանում ենք:**—**Մենք հիացնում ենք:**—**Մայրն արթնացավ և արթնացրեց յերեխային:**—**Յերեխան արթնացավ:**

Ամփոփում.—Կռոյ լրացման նկատմամբ բայերը բաժանվում են յերկու խմբի—**անցողական յեվ անանցողական:** Անցողական բայերը յերկու սեռ ունեն՝ 1) **ներգործական,** 2) **պատճառական:** Անանցողական բայերը նույնպես յերկու սեռ ունեն՝ 1) **կրավորական,** 2) **չեզոք:**

Յո՛ւյց ավել բայերի սեռը.

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսոր հրեղեն խոսքեր կռնեմ և խնդում, լսեմ հաղթական մարտի ցնծություն, տեսնեմ շարքերը ձեր հզորագոր: Յեվ լուսաբացին, լերբ հուզմած լինեմ, լերբ քնած լինեմ՝ թշնամուց խաբված, արեածագի ցնծությամբ արբած, կանչեմ ձեզ, նչամ՝ յեղբայրներ, յեյեմ...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Վերադարձ»)

Բ. Բայի պարագայական լրացումներ

§ 80. Աշակերտները դպրոցից գնում ելին իրենց տները: Նրանք անցնում ելին յերկար փողոցով: Փողոցում կտրեց ելին կանգնած: Շենքերից մեկի կտրին դռնակ եր ծածանվում:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տալիս այս կամ այն բայի գործողության տեղի պարագան: Տեղի պարագաները պատասխանում են՝ վո՞րտեղից, ո՞ւր, վո՞րտեղ, վո՞րտեղով հարցերին:

§ 81. Այդ բանը կատարվեց զարնանք: Մայիսին եր: Այդ ժամանակ վարդերը բուրում ելին: Այժմ մանրամասն հիշում եմ բոլորը: Արդեն մի քանի տարի յե անցել այդ որվանից:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տալիս այս կամ այն բայի գործողության ժամանակի պարագան: Ժամանակի պարագան պատասխանում է յե՞րբ, յերվանի՞ց, մինչե՞վ յե՞րբ հարցերին:

§. 82. Մեր կողակտիվը յեռանդով աշխատում եր: Բոլորը սիրով գործի ելին կպել: Շատ չեկինք աշխատում: Արեւ պայծառ փայլում եր: Մենք ուրախ յերգում ելինք:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տալիս այս կամ այն բայի ձեվի կամ վորակի պարագան, վոր պատասխանում է՝ ի՞նչպես, ի՞նչ կերպ հարցերին:

§ 83. Մենք յերեմ կիլոմետր գնացել ելինք արդեն: Յուրաքանչյուրիս բեռը հինգ կիլոգրամ եր կշռում: Յես ճանապարհին միքանի անգամ բեռս վայր դրի՝ հանդատանալու համար: Հեռո՛հեռո հոգնածությունս ավելի սաստկանում եր:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տալիս այս կամ այն բայի գործողության չափ ու բանակի պարագան, վոր պատասխանում է՝ վո՞րքան, ի՞նչքան, բանի՞ք անգամ հարցերին:

§ 84. Ձմեռը Գուրգենը մտելուց հիվանդացավ: Հիվանդության պատճառով բացակայում եր դասից: Ամեն ուր գեղեր եր ընդունում բժշկվելու համար: Այսպես անելով միայն կարող եր առողջանալ: Հիվանդ լինելով հանդերձ՝ ուղում եր կարժալ: Մայրն արգելում եր: Թերեխ վորդու հիվանդությունն ավելի սաստկանար:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տալիս այս կամ այն բայի հիմունքի պարագան, այսինքն՝ գործողության պատճառի, նպատակի, պայմանի, հակառակ հիմունքի յեվ յեղանակի (խոսողի վերաբերմունքի) պարագաներ:

1. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱՆ ցույց է տալիս սկզբնական հիմունք-գործողությունը հետևյալով է այդ սկզբնական հիմունքի: Պատճառի պարագան պատասխանում է ի՞նչո՞ւ, ի՞նչո՞ւ համար, ի՞նչ պատճառով հարցերին: Որինակ.—Մարգոն ուրախությունից վեր-վեր եր բաշում:

2. ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ ցույց է տալիս այն հիմունքը, վորի համար կատարվում է գործողությունը: Պատասխանում է, ի՞նչո՞ւ, ի՞նչո՞ւ համար, ի՞նչ պատճառով հարցերին: Որինակ.—Բանվորները հավաքվեցին նախաճաշելու:

3. ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ հավանական կամ յենթադրական պատճառ է ցույց տալիս: Որինակ.—Աշտոն այդպես իրեն պահե-լով՝ բոլորի սիրելին կզառնա:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱՆ աշխարհի մի հիմունք
և ցույց տալիս, վորից այլ հետեանք պետք և առաջ պար, քան
աշն, վոր իրոր կատարվում է: Որինակ.—Սոված լինելով հանդերձ՝
ամբողջ որն աշխատեց:

§ 85. Վաղը մենք անպատճառ գլուղում կլինենք: Բոլոր ըն-
կերենքն անուշ մեզ մոտ կհավաքվեն: Գուցե Սիրաքն ել աշն-
տեղ լինի: Հավանորեն մենք հաջողութուն կունենանք:

Այս խոսքերում ընդգծված բառերը (անպատճառ, անշուշտ...) ցույց են տալիս, թե խոսողն ինչ վերաբերմունք ունի դեպի խոսքի բովանդակությունը: Այդ բառերը յեղանակի պարագա չեն կոչվում:

Պարագաները յերկու խմբերի չեն բաժանվում՝

1. Բուն պարագաներ, վորոնք արտահայտվում են իրրի մակ-
բայ գործածված ածականներով և մակբայներով. որինակ.—Գե-
ղեցիկ խոսեց.— լավ չերգեց.— ճիմա կզա.— աղբն գնացել է:

2. Պարագայական խնդիրներ, վորոնք արտահայտվում են միայն մի գոյականով, կամ գոյականի հետ նաև մի կապով: Որինակ.— Մենք նաեից վերադարձանք.— մենք մնացինք առանց նաեի:

Յուրյ տվեր պարագայական լրացումները հետևյալ հա-
վածում.

Բայց խուլ ու խավար ողում այս դիշեր
մենակ և Սաքոն ու չունի ընկեր.

բուխարու կողքին լուռ թինկը տված՝
մտածում է նա... Ու մին ել, հանկարծ,

վորտեղից վորտեղ, են ձորի միջին,
միտն եկան տատի գրուցները հին...
Միտն եկան, ու մեր Սաքոն ակամա

սկսավ մտածել չարքերի վրա,
թե ինչպես ուրախ խմրով, միասին,

ծուռը վորտեղով, դիշերվան կիսին,
թուրքերի կանանց կերպարանք առած,

յերեւում են միշտ միայնակ մարդկանց...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Լուսեցի Սաքոն»)

գ. Լրացման լրացումներ

§ 86. Ընդարձակ բաղում աշակերտները խաղում էին: Պայ-
ծառ արեն աշխույժ էր ներշնչում նրանց: Ուրախ ու գլուխակի
խաղն զբաղեցրել էր ամենքին:

Այս խոսքերում ընդգծված բառերը բայերի լրացումներ չեն,
այլ լրացումների լրացումներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Յուրյ սվեք ընդգծված բառերից
վոր բայի վոր լրացման լրացումն է:—Ի՞նչ տեսակի բառեր են այդ
լրացումները:

§. 87. Առաջի մալըը հիվանդ էր: Հարեվանի վորդին բժիշկ
հրավիրեց: Բժեկի դեղատոմսը Առժողկոմատի դեղատուն տարավ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ի՞նչ տեսակի բառեր են վե-
րել բերած խոսքերում ընդգծված լրացման լրացումները: Ի՞նչնեղ
խոսքեր կազմեցե՞ն, վորոնց մեջ լրացման լրացումներ լինեն:

1. Յուրյական դերանուններ (Վ բ).
2. Հարցական դերանուններ (Վ բ).
3. Ստացական դերանուններ (Վ բ).
4. Անորոշ դերանուններ (Վ բ).
5. Հարաբերական դերանուններ (Վ բ).
6. Վորական ածականներ (Վ գ).
7. Քանակական ածականներ (Վ գ).
8. Դասական ածականներ (Վ գ).
9. Յուրյական ածականներ (Վ գ).
10. Հարցական ածականներ (Վ գ).
11. Անորոշ ածականներ (Վ գ).
12. Բայածականներ կամ դերբայներ (§ 63):

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Այն լրացման լրացումները, վորոնք զբաղում են
գոյականի վրա, կոչվում են վերագիր: Յեթի գոյական կամ
ածական վերագիրը գոյականի վրա առաջից և զբաղում, մակա-
նուն և կոչվում. որինակ՝ սպիտակ թուղթ (ուր սպիտակ բա-
ռը բուրբ բառի մականուն վերագիրն է, բառ սիրտ և այլն): Յեթի
գոյական վերագիրը զբաղում է անվան և դերանվան վրա
յետևից և այդ անվան կամ դերանվան հետ համաձայնում է հո-
լովով, ապա աշխարհի վերագիրը բացառապես և կոչվում. իսկ
այն անունը, կամ դերանունը, վորից հետո զբաղում է բացահայ-
տիչը համապատասխան հոլովով, բացահայտալ և կոչվում. որի-
նակ՝ Յերեանից՝ Հայաստանի մայրաքաղաքից գնացքը մեկնեց
դեպի Թիֆլիս. այս խոսքի մեջ բացահայտիչն է մայրաքաղաքից,
իսկ բացահայտալը՝ Յերեվանից:

Բացահայտվելը կարելի չէ շուտ տալ և դնել բացահայտյալի վրա՝ առաջից, իբրև նրա մականուն վերադիր. այս դեպքում յերկու բառերն ալլես հոլովով չեն համաձայնում. այսպես, վերևի խոսքը կփոխվի հետևյալ ձևով՝ Հայաստանի մայրաքաղաք Ֆեհե-վանից գնացքը մեկնեց:

ԿԱՆՈՆ. Բացահայտյալը բացահայտչից ու վերջինիս հետ կապ ունեցող բառերի շարքից բաժանվում է բուրով. որինակ՝ Ֆիգրա-նից՝ մեր այդ խելով յեվ աշխատանք առակներսից բուրով գոհ ենք:

§ 88. Մեր սենյակի լուսամուտի ապակին ջարդված է:— Ձեր պարտեզի այս յերկու ամենալավ ծառերը չորացել են:— Միտուշը բերեց իր կարմիր, կապույտ, կանաչ մատիտները:

Յույց ավեք, թե այս խոսքերի մեջ վոր բառը վորի վերա-դիրն է:

ՄԱՀՄԱՆՈՒՄ. Խոսքի մեջ առաջին կարգի վերադիրներն ել իրենց հերթին կարող են ունենալ յերկրորդ կարգի վերադիրներ, վերջիններս ել՝ յերրորդ կարգի և այսպես շարունակ՝ չորրորդ, հինգերորդ և այլն:

ԿԱՆՈՆ. Միևնույն բառի՝ իբար հաջորդող տարրեր իմաս-տով վերադիրներն ստորակետով չեն բաժանվում իրարից, իսկ հարանման իմաստով վերադիրները բաժանվում են ստորա-կետով. որինակ՝ պարտեզի այս յերկու ամենալավ ծառերը կապակ-ցության մեջ «պարտեզի այս յերկու ամենալավ» բառերը «ծառե-րը» բառի վերադիրներն են, բայց ստորակետերով չեն բաժան-վում, վորովհետև այդ վերադիրներից պարտեզի բառը գոյական վերադիր է և տեղ է ցույց տալիս, այս բառը ցուցական ածական վերադիր է, յերկու բառը՝ թվական ածական վերադիր է, իսկ ամենալավ բառը՝ վորական ածական վերադիր է:— «Կարմիր, կապույտ, կանաչ մատիտներ» կապակցության մեջ «կարմիր, կա-պույտ, կանաչ» բառերը մատիտներ բառի վերադիրներն են և բա-ժանված են ստորակետերով, վորովհետև յերեքն ել նույն իմաս-տով՝ վորական վերադիրներ են:

1. Մեր դպրոցի գրադարանից ստացած գրքի կազմը պոկվեց:
2. Դպրոցի գրադարանից ստացած գրքի կազմը պոկվեց:
3. Գրադարանից ստացած գրքի կազմը պոկվեց:
4. Ստացած գրքի կազմը պոկվեց:
5. Գրքի կազմը պոկվեց:

Ֆեթե խոսքի մեջ կան մի քանի կարգի (1-ին, 2-րդ, 3-րդ

4-րդ և այլն) վերադիրներ, այդ դեպքում նախ կարելի չէ բաց թողնել ամենաբարձր կարգի (ալլալ դեպքում 4-րդ կարգի վերա-դիրը, — մեր բառը), ապա 2-րդ կարգին (դպրոցի), հետո 3-րդ կարգին (գրադարանից), չորրորդին (ստացած) և վերջապես 5-րդ կարգի վարադիրը (գրքի):

Ի՞նչ փոփոխություն կկրի վերոհիշյալ խոսքը, յեթե վեբա-դիրները հետևյալ ձևով բաց թողնենք.

1. Մեր գրադարանից ստացած գրքի կազմը պոկվեց:

2. Մեր ստացած գրքի կազմը պոկվեց:

3. Մեր գրքի կազմը պոկվեց:

4. Մեր կազմը պոկվեց:

5. Գրադարանից ստացած գրքի կազմը պոկվեց, և այլն:

§ 89. Աշուտը, Միհրանը, Վարդանը, Սիրունը ու Շողիկը աշխորհրդի անդամներ ընտրվեցին:— Առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերն եքսկուրսիա դնացին:— Պետհրատի գրախանութից գնեցի՝ թուղթ, տետրակ, մատիտ, գրիչ ու թանաք:

ԿԱՆՈՆ. Խոսքի մեջ հարանման իմաստով լրացումներ կամ լրացման լրացումներ իրարից բաժանվում են ստորակետով. վերջին յերկուսը, յեթե միանում են ու կամ յեվ շաղկապով, ստորակետով չեն բաժանվում:

Գ. ՀՈՒՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

ա. Ուղղական հոլով

1. Բուն ուղղական հոլով

1. Հարցեր տալով դիտեցե՛ք բուն ուղղական հոլովի կիրառու-մը հետևյալ խոսքերի մեջ յեվ յեզրակացե՛ք՝ ի՞նչ է ցույց տալիս ուղղական հոլովը:

1. Պողոսը յիկավ (սլ յիկավ):— Ձմեռն անցավ (ի՞նչն ան-ցավ):— Սեղանի վրա գիրք կա:

2. Սահակն առակեց է:— Խնձորենին ծառ է:— Ձուրը գոլորե՛ի կղառնա:

3. Արեվը մտնելուց հետո գնացինք:— Սիրեն ուրախ, գլուխը տաք մարդ է նա:

4. Սիմոնը բար սիրտ ունի:— Նա աղվես մարդ է:

Փոխեցե՛ք հետևյալ տրամադրություններ ցույց տված ձևով:

1. Խելքը պակաս մարդ:— Կապակցամիտ մարդ:

2. Գլուխը տաք—տաքագլուխ.

3. Վոտքը կաղ—կաղտոտն.

4. Գլուխը հաստ—...

5. Գլուխը պինդ—...

6. Կաշին հաստ—...

7. Սիրտը մեծ—...

8. Գլուխը բաց—...

9. Ձեռքը դատարկ—...

10. Սիրտը սև—...

11. Կողքը հաստ—...

12. Տունը քանդված—...

13. Սիրտը մեռած—...

14. Ճյուղերը կոտրած—...

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Բուն ուղղական հոլովը խոսքի մեջ կարող է ցույց տալ՝ անող կամ յեղող առարկան (յենքակա—աշակետը կարողում է), այն հասկանիքը, վոր վերագրվում է յենքակային (աշակետք մարդ է), կարող է լինել վերագիր մի անվան (քար սիւս)։

II. Հայցական-ուղղական

2. Դիտեցե՛ք ուղղական հոլովի այն տեսակը, վոր պատասխանում է ո՞ւր, վո՞րեք, մինչե՞վ յե՞րբ, վորե՞ն ժամանակ, ինչե՞ն, վորե՞ն հարցերին։

Ծանոթություն.—Քերականներից վոմանք այս տեսակի ուղղականը հայցական հոլով են կոչում։

1. Աշակերտը գնաց դպրոց։—Քարն ընկավ գետին։—Գնացի աղբյուր։—Դրեց գրպանը։—Ձեռքը տարավ բերանը։—Գլխարկը դրեց գլուխը։—Նա թիֆլիս է ապրում։

2. Նա ամբողջ օրն աշխատում է։—Յերկու ժամ անձրև լեկավ։—Յերեսուն տարի ապրեց։

3. Այդ յերկու ուրբի արժե։—Բեռը հինգ փուլ կշռեց։—Նա մի վերս գնաց։

4. «Մուշանները» գողություն գնացին։—Յես հարսանիք չգնացի։—Ձորքը կռիվ գնաց։

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Հայցական-ուղղականը բուն ուղղականից ձեւավորվելի զանազանվում, այլ իր կատարած պատճենով՝ խոսքի մեջ կարող է ցույց տալ գործողության տեղը (գնաց դպրոց), ժամանակը (յերկու ժամ նստեց), քանակի պարագան (հինգ վերս գնաց), նպատակը (գողություն գնացին), կրող լրացում (տես ներքե՝ հայցական հոլով)։

Ցույց տվե՛ք հայցական-ուղղականները հետևյալ հատվածում.

Հասավ Մարտի 2-րդ օրը,

Փարս, Հնդկաստան,

Արարատն։

III. Կոչական-ուղղական

3. Դիտեցե՛ք ուղղական հոլովի հետևյալ տեսակը, վոր ցույց է տալիս այն առարկան, վորին դիմում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար։

Ծանոթություն.—Քերականներից վոմանք այս տեսակի ուղղականը կոչական հոլով են անվանում։

ա. 1. Առն՝, յերբեք չի մոռանա քեզ քո ընկերը։

2. Դո ընկերը, Առն՝, յերբեք չի մոռանա քեզ։

3. Յերբեք չի մոռանա քեզ քո ընկերը, Առն՝։

4. Այ՛ մարդ, հըր գնացիր։—Տո, Արեա՛կ, ինչո՞ւ չեկար։

5. Սիրելի՛ վորդիս, լա՛վ աշխատիր։

բ. Մնա՛ք բարով, արե՛վ, գարուն

և խնկարճույր ծաղիկներ,

կարկաչահոս վա՛կ սիրուն,

կանաչազգեստ բլուրներ...

Մնա՛ք բարով, համբույր և սեր,

դեմքով հրեշտակ կո՛ւյս չքնաղ,

վայելչության պալճա՛ռ ժամեր,

քաղցր ժպիտ, կյա՛նք մատաղ...

(Բանաստ. Հովհ. Հովհ.)

ԿԱՆՈՒ. Կոչական բառը խոսքից բաժանվում է ստորակետով, յեթե սկիզբը կամ վերջն է բնկնում. իսկ յեթե խոսքի մեջ տեղն է բնկնում, յերկու կողմից առնվում է ստորակետերի մեջ։ Կոչականի շեշտված վանկի վրա շեշտ է դրվում։ Յեթե կոչականի վրա ածական կամ ձայնարկություն է դրվում, շեշտն անցնում է վերջիններիս։

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Կոչական-ուղղականը ցույց է տալիս այն անձը կամ առարկան, վորին դիմում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. Խոսքեր կազմեցե՛ք, վորոնց մեջ ուղղականը ցույց տա՛

1. Յենթե՛կա (մի բան անող կամ լինող).—Կողմնակի յենթե՛կա.

2. Առարկայի վորակը կամ հատկանիշը.

3. Գործողության ժամանակը (ժամանակի հայցական).

4. Գործողության տեղը (տեղի հայցական).

5. Գործողության չափ ու քանակը (չափ ու քանակի հայցական).

6. Գործողութեան նպատակը (նպատակի հաջական)։

7. Առարկան, վորին դիմում ենք (կոչական)։

ՏԵՂԵԿԱՆՔ.—Առն՝ս, հըր էս գնում.—Նա վորս գնաց.—Հինգ իրիւմէս գնացինք.—Բանվորները մտան գործարան.—Աշխատեց մինչև ուշ գիշեր.—Առյուծ Մհեր... իշխում էր Սասուն.—Աշտը գնաց.—Լուսը բացվելուց հետո մենք վիր կացանք։

բ. Տրական հոլով

I. Սեռական-տրական

4. Համապատասխան հարցեր տալով դիտեցե՛ք տրական հոլովի այն տեսակը, վոր դրվում է մի գոյականի վրա իբրեւ ճիշտ լրացում։

Ծանոթութիւն.—Քերականներից վոմանք այս տեսակի տրականը սեռական հոլով են կոչում։

1. Ամասիկի (հիւս) գիրքը կորավ.—Սեղանի (ինչի՞) վրայ կուրծկեց։—Գրքի կազմը պոկված է։

2. Վարդանի տեսածն այդ է.—Ագոստի կողմէն ախորժելի չէ.—Արեւի ծագումը հիանալի յէ։

3. Բանվորների ազատարարը նա չէ.—Հիվանդի խնամքը ծանր է.—Մեռելի թաղումը վաղն է։

4. Շաբաթի կիրոն ութսուն կոպեկ է։—Յորենի փութը լերկու ուրբի չէ։—Ձվի հատը չերեք կոպեկ է։

5. Խոսի դեղը բարձր էր։—Յորենի հացը գարու հացից լավ է։—Բրնձի՞ քաշովին է լավ, թե՞ ձավարի քաշովին։

6. Գլխի մազերը, մաշի մատանին, մեջքի գոտին, գլուղի բնակիչները, կարասի գինին։

7. Այսուրիս դասը, ամառվա միջը, նոր տարվա ցուրտը, մալիսի վարդը։

8. Մի ուրբու չիթ, քան կոպեկի խաղող։

9. Առաջին ասիւնանի դպրոց, լավ խելի մարդ, նոր ձկնի հագուստ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Խոսքեր կազմեցե՛ք, վորոնց մեջ այս տեսակի տրականը (սեռականը) ցույց տա՛

1. Պատկանելութիւն, առարկա, վոր տեք է մի ուրիշ առարկայի (ստացական սեռական)։

2. Ամբողջը, վորի մասն է վերցվում (մասնական սեռական)։

3. Նյութը, վորից կազմված է առարկան (նյութի սեռական)։

4. Տեղը, ուր կա կամ լինում է մի բան (տեղի սեռական)։

5. Ժամանակը, ուր կա կամ լինում է մի բան (ժամանակի սեռական)։

6. Գինը կամ արժեքը (գնի կամ արժեքի սեռական)։

7. Վորակը կամ տեսակը (վորակական սեռական)։

ՏԵՂԵԿԱՆՔ. Հացի կիրոն վիշքան արժէ.—Սահակի գիրքը վաղուց կորել է.—Պատգամքի սեղանը մեր հարեանինն է.—Խոսի դեղը յերեկ է տեղափոխված.—Այսուրիս դասերը հաջող անցան.—Նա որական մի ուրբու մթերք է գնում.—Յես սովորում եմ յերկրորդ ասիւնանի դպրոցում։

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Սեռական հոլովը տրականից տարբերվում է վոյ քե ձեղով, այլ խոսքի մեջ իր կատարած պատշոնով. սեռականը դրվում է անվան վրա՝ իբրեւ ճիշտ վերադիր (ծառի ճյուղը). բուն տրականը բայի կամ ածականի լրացումն է լինում (գիրքը տվի Արշակին... մարդու հաճելի)։ Սեռական հոլովը վորոշող հոլով չի գործածվում, մինչդեռ տրականը կարող է քե անհոլ յեղ քե հոլով գործածվել (մարդու տվի, մարդուն տվի)։ Միմանի դեռանունների սեռականը տրականից զանազանվում է (իմ—ինձ, քո—քեզ, նրա—նրան և այլն)։

II. Հայցական (ուղղական յեղ տրական) հոլով

5. Դիտեցե՛ք ուղղական և տրական հոլովների այն տեսակները, վորոնք կրող լրացում են լինում՝ դրվելով անցողական բայերի մոտ։

Ծանոթութիւն.—Այս տեսակի ուղղականը և տրականը քերականներից վոմանք հայցական հոլով են անվանում։

1. Յես մի մարդ տեսա։—Մարդ մարդու ցելսը չի գցի։—Յես այն մարդուն տեսա։

2. Այնտեղ մի մարդ սպանեցին։—Այնտեղ այն մարդուն սպանեցին։

3. Նա բնկեք է փնտռում։—Նա կորցրեց իր բնկերդ։

4. Նա հայր ու մայր չունի։—Նա կորցրել է իր հորն ու մոր։

5. Այսօր շատ շուտ ծեծեցի—Նա շուտ ծեծեց։
6. Մի կով մորթեցին, մի յեզ։—Մեր կովն ու յեզը մորթեցին։
7. Նա խեղճ ձիուն շատ և ծեծում։—Մեր ձին գողացան։
8. Դու հավ մորթեցիր։—Դու հավը մորթեցիր։
9. Բանվորը փայտ և կոտորում։—Բանվորը փայտը կոտորեց։
10. Արամին սպանեց։—Գրիգորին բռնեց։—Մանուշին թակեց։
11. Մարդ բռնել, մարդու բռնել, մարդուն բռնել. — յերեսա ծեծել, յերեսայի ծեծել, յերեսային ծեծել.— բնկեր սիրել, բնկերօջ սիրել, բնկերին սիրել.— մարդ լացացնել, մարդու լացացնել, մարդուն լացացնել, սարերին ու փառերին լացացնել, սարեր ու փառեր լացացնել.— Հայր, մայր, բույր, յեղբայր ճանաչել,— հորը, մորը, բռնողն ու յեղբոր ճանաչել.— Նա աղջիկ ունի,— նա աղջկան նշանեց։— Ամեն մի դպրոց իր վարիչը, իր գործավարը և տեսչիկան կան աշխատավորն ունի։— Բժիշկ հրավիրել.— բժեկին հրավիրել։ Ձի թամբել,— ձին թամբել։

ՀԱՐՑԵՐ.— 1. Պարզեցե՛ք այդ որինակներից—կրող լրացումը ե՞րբ և ուղղական ձեվով հայցական դրվում յե՛վ յե՛րբ՝ տրականի ձեվով հայցական։

2. Կարելի՞ յե ասել՝

1. Կովին մորթել, հավին մորթել, ձիուն սպանել, կատվին սպանել։

2. Եղին ցեխից հանել.— Գայլը վոչխարին կուտի։— Կովին քշել։

3. Արամս սպանեց Սահակը։— Վաչիկը բռնեց Սիրուշը։

4. Դուանը ծեծել.— ապակին ծեծել.— մեկի կարիքին բավարարել։

Յեքե սխալ են, ապա ասացե՛ք ուղիղ ձեվերը։

3. Կարելի՞ յե ասել՝

Մեղադրել ձիուն,— անիծել կովին,— անասունին դարմացնել,— կապեց խեղճ անբանին։

Յեքե կարելի ե ասել, ապա բացատրեցե՛ք, քե ինչո՛ւ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յեք կրող լրացումը (լինի ռնչավոր քե անշուշտ) մեծվում և իբրե՛վ իր, պատասխանելով ի՞նչ հարցին, այդ դեպքում դրվում և ուղղականակերպ հայցական կամ իրի հայցական. իսկ յեք կրող լրացումը մեծվում և իբրե՛վ աճն, պատասխանելով ու՛մ հարցին, այս դեպքում դրվում և տրականակերպ հայ-

ցական (հար ջարդեց.— մարդ սպանեց— ի՛նչ.— Սահակին սպանեց, սարերին վողբացրեց— հում)։

Հետևյալ յերկու արտահայտություններից վո՛րը յե՛րբ կարելի յե գործածել.

Լավը հիշել.

մեծը կորցրի.

յերեքը գտա.

մյուսը գտա.

այս մոռացա.

ի՛նչ տեսար.

մերոնք կորցրել եմ

սրանք տարեք.

տանն ել ի՛նչ ունեմ.

այն, վոր տեսել եմ

Լավին հիշել.

մեծին կորցրի.

յերեքին գտա.

մյուսին գտա.

սրան մոռացա.

հում տեսար.

մերոնք կորցրել եմ.

սրանք տարեք.

տանն ել հավ ունեմ.

այն, վորին տեսել եմ։

III. Բուն տրական հոլով

6. Դիտեցե՛ք բուն տրական հոլովի կիրառումը ստորեվ բերված խոսքերի յեվ որինակների մեջ.

1. Այս նամակը տուր Հայկին։— Այս գիրքը նվիրիր Սիրուշին։— Մենք պատահեցինք աշակերտներին։— Մենք մասնակցեցինք աշխատանքին։ Դու ցրտի սովոր ես։— Խղճացե՛ք նրան։— Նա յեղբոր դաս և տալիս։— Հեռվից սեվին ու սպիտակին և տալիս, կարմրին և տալիս։— Գլուխը տվեց պատին։

2. Կուշտը փաղցածին մանր կերդի։— Վոսփին տեղ արավ, գլխին ել ուղեց։

3. Նա գիրքը մեկ ուղարկու ծախեց։— Նա մեկին հինգ և աշխատում։

4. Ջանգի ձայնին աշակերտները դուրս թափվեցին։— Մեկի խոսքին խաբվեց։

5. Մենք հավաքվեցինք ժողովի։— Դու գնացիր ջրի։— Նա գնաց բնելու։

6. Նրա գլխին գլխարկ չկա։— Մատին մատանի չկա։— Մեջքին, ձեռքին, նակասին։— Դու շատ ես տաքել նրա տանը։— Նա նրա տեղ և բարձր բլրին, սարին, փառին, կտրին, ծառին, յեղեթին...

7. Ճանապարհորդը տեղ հասավ կեսորին։— Դու գարնանն ես չեկել։— Փետրվարին ձյուն չեկավ։— Նա ծնվել և 1905 թվին։— Այս

եզգին *հըր* ես *դնում*։—*Նրա* հարսանիքին, ծննդին, տոնին, բաղ-
ժանը...

8. *Դու ել նրա* որին *ես*,—*Մի* խելի *մարդ եք*։—*Յես քո* կա-
ծիքին *չեմ*։—*Քո* պատկերին, կերպարանին, ընդունակության, շը-
նորհին...

ՍԱՀՄԱՆՈՒՄ. **Քույր** **տալան** հոլովը ցույց է տալիս՝ այն
առարկան, վորին մի բան տրվում է, ուղղվում է մի բան. վորի ոգ-
տին կամ վնասին մի բան լինում է. տեղն ու ժամանակը, ուր կա
կամ լինում է մի բան (*գիրքը տվեց Աշոտին, մոտեցավ Աշոտին,*
Աշոտին հագուստ կարեցին, յես յեկա ապրիլին)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Խոսքեր էկազմեցե՛ք, վորոնց
մեջ տալանը ցույց տա՝

- | | |
|--|-----------------|
| 1. Այն առարկան, վորին մի բան տրվում է. | 5. Տեղ. |
| 2. Դին կամ արժեք. | 6. Ժամանակ. |
| 3. Պատճառ. | 7. Ձե կամ կերպ. |
| 4. Նպատակ. | |

գ. Բացառական հոլով

7. Իրեցե՛ք **բացառական** հոլովի կիրառումը հետևյալ որ-
նակներում.

1. *Ծանապարհորդը դուրս յեկավ* գյուղից։—*Նա յեկավ* այ-
գուց, քաղաքից, սարից... *Բռնեց նրա* գլխից, մազերից, ձեռքից...
Կապեց ծառից, սյուներից...
2. *Անցյալ տարվանից այստեղ եմ*։—*Մի ամսից կգամ*։—Առա-
վանից *երկու*ն, գյուղից *քաղաք*...
3. *Մեկի* այլից *ընկնել*, խելից *հանել*, հալից *ընկնել*...
4. *Կավ-լավ* բաներից *խոսել* ու *պատմել*։—*Ինսից-դեմից* *խո-
սել*։—Ախարհից *անտեղյակ*, ցավից *զանգատվել*։
5. *Խելից* *պակաս մարդ*։—*Դրսից՝ քահանա*, *նեղսից՝ սատա-
նա*։—*հայերենից թույլ*։—*ուժերից վեր*։
6. *Նա խելոհներից խելոք է*։—*Նա բոլորից լավ է*։
7. *Սովից մեռավ*։—*վեսից մաշվեց*։—*նայնից ճանաչեց*։—*հա-
մից, հոտից, գույնից խմացավ*։
8. *Դուք հաղթվեցիք* մեզնից։—*Ծառը կոտրվեց* քամուց։
9. *Այս հացից մի կիլո տոն*, *այս գինուց՝ յերկու շիշ*։—*մեզ-
նից յերկուսը զնացին*, *նեղներից՝ չորսը*։
10. *Այս մեկը վաղուց է*, *այն մեկը՝ յերկաթից*։—*փայտից պատ-
րաստիք*։

11. *Նա հրաժարվեց* պատճենից։—*այս եմ պահանջում* նը-
քանից։

ՍԱՀՄԱՆՈՒՄ. **Բացառական** հոլովը ցույց է տալիս գոր-
ծողության ուղղակի տեղ, այն առարկան կամ տեղն ու ժամանակը,
վորից առնվում, բաժանվում, հեռանում կամ ծագում, առաջ է
գալիս մի բան։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք խոսքեր, վորոնց
բացառականը ցույց տա՝

1. Տեղ.
2. Ժամանակ.
3. Նյութ.
4. Առարկան, վորից գործողությունն անցնում է յենթա-
կալի վրա.
5. Պատճառ.
6. Համեմատություն կամ բաղդատություն.
7. Առարկան, վորի մասին պատմում են։

գ. Գործիական հոլով

8. Իրեցե՛ք **գործիական** հոլովի կիրառումը ստորեւ բերած
որինակներում.

1. Սղոցով *կտրեցի*, *սուրճով տաշեցի*։—*Մաքիսով գրեցի*,
ռեթինով ջնջեցի։
2. *Մենք անցանք* բլրի ստորոտով, *բարձրացանք* լանջով։—
Ջուրը հոսում է առվով։—*Յերկնով ամպեր են անցնում*։ *Քո զըլ-
խով շատ բաներ անցան*։
3. *Դուք գիտեցով աշխատում եք*։—*Որը ցերեկով ձեծեց նը-
րան*։—*Յերկու ժամով բացակայեց*։
4. *Նա շնորհիվ տղա յե*։—*Համով, հոտով կերակուր*։—*Կաթ-
նով վոշխար*։—*Ուժով մարդ*։—*Մեռով տղա*։—*Շեկ մազերով, ծով
ալիքերով*։
5. *Այդ գյուղը հինգ վերսով հեռու յե*։
6. *Նա ծագումով գյուղացի յե*։—*Լեզվով ճարտար է*։—*Վոս-
քով կաղ է*։
7. *Շաքարի կիլոն ութսուն կոպեկով գնեցի*։—*Սենյակն ամ-
սական վեց ուրբով վարձեցի*։
8. *Մարդիկ իրարով անցան*։—*Մեզնիս անցավ*։—*Վզով փա-
թավել*։

9. Գեառնը ծածկվեց ձյունով:—Գետը ծածկվեց սառուցով:
10. Դու նրա խոսքով արիւ:—Նրա արտով չեղավ:—Բանն որեւէ
նով կանեն:

11. Մենք հնգով եւ զնացինք զբոսանքի:—Դուք չորսով եւ
բացակա եյիք:—Յերեք հոգով գնացինք:—Ամբողջ խմբով, ամ-
բողջ բնակիչով, բոլոր բնակներով...

12. Մենք մտով կերակուր ունենք:—Դուք բռնով քաշովի
կերպք:—Յուղով փլավ, ձերով փլավ, նավթով ճրագ, օսկանակով
տուն...

13. Մենք նրա հրավերով յեկանք:—Վերջին տեղեկություն-
ներով՝ նա հիվանդ է:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Գործիական հոլովը ցույց է տալիս այն
առարկան, վորով կամ վորի միջոցով, իբրեւ գործիքով, կամ միաս-
նությամբ կատարվում է մի բան:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք խոսքեր, վորոնց
մեջ **գործիակներ** ցույց տա՛

1. Դործիք, վորով մի ծան անում են.
2. Տեղ.
3. Ժամանակ.
4. Վորակ.
5. Քանակ.
6. Գին եւ արժեք.
7. Միասնություն, միասին մի բան անելը.
8. Նյութ, վորից կազմված է մի առարկա.
9. Հիմունք:

Ե. Ներգոյական հոլով

9. Դիտեցե՛ք **ներգոյական** հոլովի կիրառումը ստորեւ բերած
որինակներում.

1. Մենք պարապում ենք դարոցում:—Սենյակում աշխատում
եմ:—Նրա գլխում խելք չկա, աչքում լույս չկա:—Դառնում բուսած
ծաղիկ:—Քաղաքում ու գյուղում, Ամերիկայում... ներքուստ, վե-
րեւում...

2. Հինգ ժամում տեղ հասանք:—Մի տարում կվերջացնեմ:

3. Այդ յեղել է անցյալ դարերում:—Մեր օրերում չեղավ:

4. Այս բանում դու մեղավոր ես:—Նկարելում լավ ես:—Ու-
տելում, խմելում, յերգելում, աշխատելում...

(Նկարելու մեջ, յերգելու մեջ...):

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Ներգոյական հոլովը ցույց է տալիս այն
առարկան, տեղը կամ ժամանակը, վորի մեջ մի բան կա կամ լի-
նում է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք խոսքեր, վորոնց
մեջ **ներգոյական** ցույց տա՛

1. Տեղ. 2. Ժամանակ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ցույց տվե՛ք 1. բուն ուղղա-
կանը, 2. կոչական ուղղականը եւ 3. հայցական ուղղականը
ստորեւ բերած որինակների քննարկած բառերի մեջ.

1. Յեւ ինչո՞ւ միայն նա յերգի, միայն նա,
Հովակիմը, Կարոն, Սողոմոնը, Մարգարը,
կամ մի բիթլիսցի, վանեցի Պողոս.
Իսկ Իվանը, Յուսուֆը, Չուկ-Ֆոֆը,
վոր իբար ճանաչում են վաղուց...
... Կարող ե այսօր Տիբեթից
Թոշկի Ռա՛ւոս, Պետրոգրա՛դ, Բիքլի՛ս...
... Բիթլիսից՝ Մարտի, Յերեվան,
Պեկին, Գանիբե, Չիկագո:
Ո՛ր, վաղուց ե աշխարհը դարձել
մի փոքրիկ-փոքրիկ փողոց...
2. Կանչեց աշխուժ հրձիգ.
— Բանվորներ՝ ամբողջ աշխարհի, միացե՛ք:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Ամենապոետ»)

3. Պոլեսարներ՝ բոլոր աշխարհի, միացե՛ք:

4. Դիտե՛ք անցյալ:—Դիտե՛ք անցյալ չեղավ:

Մնաց մինչեւ գիշեր:—Շուտ անցիր, գիշեր:—

Առաջ դուրս ե:— Գնաց դեպի Առաջ:—

Աշտ, յեւ այստեղ:—Նրա անունը Աոս ե:—Նրան Աոս
են կանչում:

Լույսը հանգավ:—Յես լույսը հանգցրի:—Լույսը բացվելուց
հետո վեր կացանք:—Թող դեպի լույսը:—Բացվիր, ո՞վ լույս:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ցույց տվե՛ք 1. բուն-տա-
կանը, 2. սեռական-տականը եւ 3. հայցական-տականը ստորեւ
բերած որինակներում.

1. Անլուրի վշշում ե
պղտոր ջուրը Դեբեդի,
նրա ափին կանչում ե
մենակ շերիմն իգիթի:
2. Յեզ միքանի ընկեր տղերք
ձորում, գետի յեզերքին,
փոս փորեցին ու սրտաբեկ
հողին տվին հովվի դին:

3. Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես...
վաղուց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ասում են՝ ուռին աղջիկ եր ինձ պես,
մնում եր յարին, ու չեկավ նա տես:

4. Բազմած լուսնի նուրբ շողերին,
հովի թևին թռչելով,
փերերերը սարի գլխին
հավաքվեցին գիշերով:

5. Ափսոս, իգիթ, քո յարին...
Ափսոս եղ ծով աչերին...

6. Յեզ մութ աչերից մամոտ ժայռերի,
թավուտ ծակի լռին խորքերից,
մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
արձագանգն ահա լսում եմ նորից:
Թնդում ե զվարթ աղմուկը բինի,
բարձրանում ե ծուխն իմ ծանոթ ուրթից...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Անուշ»)

7. Բանվորի աղան յեկավ:—Պատահեցի մի բանվորի:—Հանձ-
նեցի մի բանվորի:—Հանձնեցի այն բանվորին:—Կողոպտեցին
մի բանվորի:—Կողոպտեցին այն բանվորին:—Բանվորի հագուստը...
բանվորի անունը... բանվորի պես... բանվորի մոտ...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արտագրեցե՛ք, ամեն մի գոյա-
կանի (անվան և դերանվան) վրա նշանակելով իր հոլովն՝ ըստ
ձեզի և ըստ նշանակության (բուն ուղղական=բ. ու.—կոչական
ուղղական=կ. ու.—հայցական-ուղղական=հ. ու.—բուն տրա-
կան=բ. ս.—սեռական-տրական=ս. ս.—հայցական-տրական=հ. ս.
—բացառական=բ.—գործիական=գ.—ներգոյական=ն.):

1. Ծիծաղախիտ վաճառ ծովի ամեն գիշեր մի տղա:
փոքրիկ գլուղից առափնյա Ծովն եմ տեսնում առանց նավակ,
ծովն եմ մտնում գաղտագողի բազուկներով առնացի

ջուրը ճողփում, լող ե տալիս այնտեղ՝ մոտիկ դարանում:
դեպի կղզին դիմացի: Ծփում ե ծովն ալեծածան,
Սիրուն թափառն ամեն գիշեր ծփում ե սիրսը տղի,
այնպես կրակ ե անում գոռում ե ծովն անհղաձայն,
և սպասում ե անհամբեր նա կռվում ե կատաղի:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Աղթամար»)

2. Նայիր, դստիկ իշխանագուն,
այս փառերին լայնալանջ,
այժմ պիտի հանդես դուրս գան,
պայքար մղեն քո առաջ՝
մեկը իրեն ուժը ցույց տա,
մյուսը շնորհքն իր բազկի,
վորը ճարպիկ ձիաբեկ,
վորն էլ քափը իր բազկի,
Իսկ յերբ կռիվն առնի դադար,
հայտնի լինեն քոցն ու վառ,
ու չկրք անցնեն մեր առջևից
կերպները պայազատ,
ընտրիր, զարկիր ձեռքիդ խնձորն
անհաղթներից անհաղթին,
վոր վողջ աշխարհ մայիլ մնա
անզուգական քո բախիկն:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Փարվանա»)

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ ե հոլովը.
2. Քանի՞ հոլով կա.
3. Ինչո՞վ ենք վորոշում հոլովների թիվը.
4. «Հայցական», «սեռական» և «կոչական» կոչված հոլով-
ներն ըստ ձևի կան արդյոք մեր աշխարհագրում.
5. Ի՞նչ ե նշանակում հոլովի ձևը և հոլովի պատճեն
(Ֆունկցիա).
6. Հոլովների թիվն ըստ ձևի պետք ե վորոշել թե ըստ
ֆունկցիաների.
7. Կարձկ ե, արդյոք, նույն ձևն ունեցող հոլովը տարբեր
ֆունկցիաներ կատարել.

7. Կարող են լեզվի մեջ բառի բոլոր ֆունկցիաների համար տարբեր ձև ունեցող հոլովներ լինել:

9. «Հայցական», «սեռական», «կոչական» կոչված հոլովները, յեթե հատուկ ձև չունեն, կարող են ձևական հոլովների շարքը մտնել:

10. Զի կարելի, արդյոք, հոլովներն իսպառ վտարել աշխարհաբարի քերականությունից, նրանց ֆունկցիաները հատկացնելով այն հոլովներին, վորոնց նույնացել են հիշված հոլովները պատմականորեն:

ՏԵՂԵԿԱՆՔ.

Հոլովները զանազան հարաբերություններ են արտահայտում, վորոնցով գոյականը (անուն և դերանուն) խոսքի մեջ իբրև լրացում կապակցվում է մի ուրիշ բառի հետ:

Աշխարհաբար հայոց լեզուն հինգ հոլով ունի—ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական:

Յուրաքանչյուր հոլով վորոշվում է իր հատուկ ձևով և խոսքի մեջ վորոշ պաշտոն կամ միջանի պաշտոններ է վարում:

«Կոչական», «սեռական» և «հայցական» կոչված հոլովներն, ինչպես տեսանք հոլովների կիրառումից, աշխարհաբարում հատուկ ձև չունեն. և վորովհետև հոլովների թիվն ըստ ձևի պետք է վորոշել և վոչ թե ըստ ֆունկցիաների (վորոնց թիվը չափազանց շատ է, ինչպես վերը տեսանք), ուստի աշխարհաբարում ձևականորեն չկան այդ յերեք հոլովները: Դրանցից «կոչականը» նույնացել է ուղղականին, առանց, սակայն, վերջինիս պես վորոշ դեպքերում վորոշիչ հոգ (ն, ք) ընդունելու. «սեռականը» նույնացել է տրականին, դարձյալ վորոշիչ հոգի կիրառման տարբերութամբ (սեռականի ֆունկցիա կատարող տրականին հատուկ չի ն վորոշող հոգը). իսկ «հայցական» հոլովը նույնացել է կամ ուղղականին (իրի հայցական—մարդ սպանել, քար ջջարդել), կամ տրականին (անձի հայցական—մարդուն սպանել, սարերին ու քարերին լացացնել):

Այսպիսով, «կոչական» կոչված հոլովի ֆունկցիան ուղղականն է կատարում, «սեռական» կոչվածինը—տրական հոլովը, իսկ հայցական կոչվածինը—վորոշ դեպքերում ուղղականը, վորոշ դեպքերում՝ տրականը:

Ուրեմն նույն հոլովը կարող է տարբեր, նույնիսկ իրար հակադիր ֆունկցիաների (յենթակա և խնդիր) պաշտոն վարել:

(«մի մարդ յեկավ» խոսքի մեջ մարդ ուղղական է և յենթակայի ֆունկցիա ունի. «նա մի մարդ տեսավ» խոսքի մեջ մարդ նույն ձևն ունի, բայց կրող խնդրի՝ յենթակային հակադիր մի ֆունկցիա ունի):

Լեզվի մեջ բառի բոլոր ֆունկցիաների համար առանձին տարբեր ձևեր չկան. յեթե ամեն մի ֆունկցիայի համար մի առանձին ձև լիներ, ապա չափազանց շատ կլիներ հոլովների թիվը:

Այն քերականները, վորոնք ձևականորեն դնում են այդ հոլովները (կոչական, սեռական, հայցական), նրանք հոլովները վորոշում են վոչ թե ըստ ձևի, այլ ըստ ֆունկցիաների. այնինչ մենք գիտենք, վոր այդ ֆունկցիաները շատ ավելի շատ են, քան նույնիսկ յեղած հոլովների վրա այդ արդեն մեռած հոլովներն ավելացնելուց ստացած թիվը:

Վորոշ դեր են խաղացել նաև ոտար լեզուների և մեր հին գրաբար լեզվի քերականությունները. մեր քերականները, հետևելով ոտար քերականներին, պահել են այդ հոլովները:

Այդ հոլովներն իսպառ կարելի չե վտարել աշխարհաբարի քերականությունից, հաշտվելով, վոր պատմականորեն մեռել են այդ հոլովները:

Ծանոթութուն.—Մեր դասագրքում այդ հոլովներն ըստ ձևի (չ. լեզ. գործն. քերակ. Ա. մաս) չեն դրված: Հոլովների կիրառման բաժնում (Բ. մաս) այդ հոլովները հիշատակված են այն հոլովների կողքին, վորոնց նույնացել են, նկատի ունենալով հին քերականությունից դեռ չազատագրված՝ ուսուցչության մի վորոշ մասին և ուսուց լեզվի դասավանդումը մեր դպրոցներում:

Դ. ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

(«Նախագրություն յեվ հետագրություն»)

§ 90. Դիտեցե՛ք կապերը (իսկական յեվ անիսկական) յեվ աացե՛ք վո՛ր կապից հետո կամ առաջ ի՛նչ հոլով է դրվում այն բառը, վոր կապի միջոցով իբրեվ խնդիր կապվում է մի ուրիշ բառի, գլխավորապես բայի հետ:

1. Թոչում է հոգիս, թոչում դեպի տուն:
2. Հանդիստ կաց, Անհուշ, դու հասած աղջիկ՝ ի՛նչ ունիս ջահել չորանների մոտ:
3. Դուրս յեկավ թեթև ամպերի տակից Անուշը՝ փախած յեղնիկի նման:

4. ծաղիկ են քաղում:
5. Դե հանիք, աղջիկ, վիճակն ի բարին:
6. Սիրտդ մի կտորի սուտ բանի համար:
7. Աչքերի առջև մլարը պատեց:
8. Խնդրում եր՝ լալով լեղբոր առաջին
անգոր ու դալուկ իր քույրը չոքած:
9. Մինչեւ դաստակը սիրտդ եմ խրելու:
10. Տղերքը դեպի քարափն են վազում:
11. Մարեր ու ձորեր վոտնատակ տվեց՝
չորան Սարոյին գտնելու համար:
12. Քաղվոր կանանց մեջ, մթան հեռ, թագուն...
Անուշը ձորից լեկավ հորանց տուն:
13. Դուք ել ինձ հեռ ձեն տվեք:
14. Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց
գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:
15. Առանց նախելու մարդկանց չերեսին,
առանց խոսելու, սեակնած, դաժան,
մոտեցավ սրահին, կախ տվավ անին
սև հրացանը՝ սև ոձի նման:
16. Վոդբացին անշունչ դիակի վրա,
անտեր մնացած վոչխարի մասին:
Յեվ նրա մասին, վոր ընկերները
հանդը գնալիս Սարո կկանչեն...
17. Ծառս լեղավ դուռման յերկնքի դիմաց:
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)
18. Ի գիտություն հայտնել.— ի պատիվ քո.— ցտեսություն,
որեցոր, ցնոր կարգադրություն.— դեմ առ դեմ, տող առ տող.
առաջժ.— դեպի տուն,— դեպի նա,— դեպի քեզ,— դեպի ինձ,— դե-
պի վորդին.— մինչեւ ախոր,— մինչեւ գյուղ,— մինչեւ ալգին.—
բս որենքի,— բս Արամի,— բս լրագրի.— ընտանիքով հանդերձ,—
այս անելով հանդերձ.— այն որից իվեք.— ինձ համար,— քեզ հա-
մաս,— զուր բանի համար.— առանց ինձ,— առանց քեզ,— առանց
ջրի.— բացի ինձնից,— բացի քեզնից,— բացի ջրից,— բացի այս,—
բացի այդ.— ավելի լավ քան այդ:
19. Ինձ պես,— քեզ պես,— մարդու պես,— թրի պես.— ինձ
չափ,— քեզ չափ,— մարդու չափ,— յերկու հազարի չափ.— աչքը

չինելու տեղ,— նրա տեղ.— ինձ հեռ,— քեզ հեռ,— զոր հեռ,— լույսը
բացվելու հեռ,— յես ծանոթ եմ նրա հեռ,— յես ծանոթ եմ Գրի-
գորի հեռ (փոխադարձ ծանոթություն— նա յեւ ինձ եւ ծանոթ).—
յես ծանոթ եմ նրան, յես ծանոթ եմ Գրիգորին, յես ծանոթ եմ
պատմության, գրականության (վոչ փոխադարձաբար).— հետո,
հետո, հետինս, հետինդ.— սրա դեմ,— գրքի դեմ,— չերկոյան դեմ.—
ինձ մոտ,— քեզ մոտ,— գյուղի մոտ,— լուսանալու մոտ.— ինձ վրա,—
քեզ վրա,— սեղանի վրա,— այս խոսքի վրա,— ծիծաղել մեկի վրա,—
խոսք խոսքի վրա,— վրա չերկրորդ որը:

Ե. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ի. Յեթնականի յեվ բայի

- § 91. 1. Գարունը յեկավ, հավերքը յեկան,
սարեւ ու անրեւ ծաղիկներ հագան.
մի աղջիկ յեկավ, մի մենակ քաղվոր,
դեպի յեղբորն օրջում ե մոլոր...
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)
2. Կոմմուննա, Կոմմունա Պարիզյան,
հոծ բանվորների յերգն ե ղողանջում.
ծաղկած մարտ ամսին՝ Մոն Մարտի գրանիտ
դուրս պրծած մեջքին շանք ե սլանում
ու վորոտ լավում:
Յեվ ցածրում՝ ներքե ալ ղրոշակների
խիտ անհառ ծլեց գարնան բոցերով:
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Կոմմունայի կործանումը»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յեթնականի յեվ բայը քվով ու դեմով հա-
մաձայնում են. յեզակի յեթնականի հեռ յեզակի բայ ե դրվում, հոգ-
նակի յեթնականի հեռ՝ հոգնակի բայ (որ՝ գարունը յեկավ, հավ-
երքը յեկան):

- § 92. ա) 1. Ու դղրդացին արձակ կրկեսում շփոք ու շունջ,
հաղիվ լսելի խառնակ աղաղակ ու դժգոհ տրտմոջ...
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Դեցիմ Լաբերիոս»)

2. Ու իրար բռնած Սարոն ու Մոսին՝
բառում են, ընկնում խոզապանուկի.
ընկնում են գետին, յեկնում միասին,
դժվար ե իրեն հաղթել մեկ-մեկի:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յերե միեկնույն նախադասության մեջ մեկից ավելի (բազմակի) յեզակի յենթակա կա, այդ դեպքում բայը հոգնակի յե դրվում (*որ.՝ Սարոն ու Մոսին քաշում են*):

բ) Նրանց լավն ու վատը չի իմացվում, մեծ ու փոքր չի նանայվում:—Լացն ու կոծն *անվերջ* լավում ե:

Ուշեն ու միսքը վրան չի, չափ ու սահման չի...

Վարքն ու բարքը փոխվել ե:

Խոսքն ու զրույցը վերացել ե:

Հինն ու նորը մոռացվել ե:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յերե միեկնույն նախադասության մեկից ա, վելի յեզակի յենթակաները հումանիս բառեր են (*լացն ու կոծը*), կամ վառվե առնչությանը միասին են գործածվում իբրեվ մի բառ-այդ դեպքում բայը սովորաբար յեզակի յե դրվում (*չափ ու սահման չկա*):

§ 93. Առակերտությունը դուրս յեկավ *դպրոցի բակից*: Բազմությունը խոնավել եր *փողոցում*: Փողովաւողն ուրախ բացականչություններ եր անում: Տոնակատար հանձնաժողովն ամեն ինձրագրել եր...

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Հավաքական իմաստ ունեցող յեզակի յենթաչկայի բայը յեզակի յե դրվում (*աշակերտությունը դուրս չեկավ*):

§ 94. Այս *դպրոցում* տասներկու դասարան կա. ամեն մի դասարանում քսան նստարան կա: Այստեղ չորս հարյուր ուսուցիչ եր աշակերտ ե սովորում:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յերե յեզակի յենթական մեկից ավելի թիվ ցույց տվող ածական ունի, բայը մեծ մասամբ յեզակի յե դրվում (*քսան նստարան կա*):

II. Մականվան յեվ անվան

§ 95. Յեվ մութ այրերից մամուռ ժայռերի, քավուս ծմակի լոին խորքերից մանուկ հասակիս հնչուն ծիծաղի արձագանգն ահա լսում եմ նորից: Թնդում ե զվարք աղմուկը բինի, բարձրանում ե ծուխն իմ ծանոթ ուրթից, ու բոլորն ահա, նորից կենդանի, չելնում են աշխույժ վաղորդյան մութից, ու քառմ, ցողապատ լեռների լանջում... Սոս... աղանջ արա,— հովիթս ե կանչում...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Գոյական անունն ու իր անջեկից դրված ածական կամ գոյական լրացումները թվով ու հոլովով չեն հառնանում (*մութ այր, մութ այրին, մութ այրից... մութ այրեր, մութ այրերի, մութ այրերից... քար սիրտ, քար սրտի... քար սրտեր, քար սրտերի...*):

§ 96. Քառսուն կույս աղօթիկ բերեք արմաղան, Բառսուն զարճ կնիկ, վար չերկանք աղան...

Հազար հազար մարդ նորեկուկ մանուկ,

հազար հազար մարդ անբեղ, անմորուք,

հազար հազար մարդ բեղը նոր ձլած,

հազար հազար մարդ թախտից նոր լեւած...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Սասունցի Դավիթը»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Մեկից ավելի թիվ ցույց տվող լրացումների գոյականները սովորաբար յեզակի յեն դրվում (*հազար հազար մարդ, յերկու զիրք, հարյուր մանեթ, քսան մարդ, հինգ պետություն*):

§ 97. Հինգ յերկար ու ձիգ տարիներ են անցել այդ սրից, հազար ու մի դժբախտություններ յեկել են ու անցել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յերե լրացումն առանձնապես շեշտում ե բառարանի գաղափար, կամ թե անվան ու թվական բառի միջով ուրիշ բառեր կան, անունը կարող ե հոգնակի դրվել:

III. Բացահայտի յեվ բացահայտյալի

§ 98. Թիֆլիսից՝ Անդրկովկասի մայրաքաղաքից յերկսթուղիններ են մեկնում զեպի Բագու, Բաթում և Յերևան: Յերեվանով՝ Հայաստանի մայրաքաղաքով... Յերեվանում՝ Հայաստանի մայրաքաղաքում... Մեզ՝ յերիտասարդ ուսանողներին վրա պարտք կա... Ձեզ՝ յերիտասարդ ուսանողներին...

ԿԱՆՈՆ. Բացահայտիչը դրվում ե բացահայտյալի յետևից և թվով, հոլովով ու զեմքով համաձայնում ե նրա հետ: Դեմքով համաձայնությունն արտահայտվում ե ս, դ զիմորոջ հոդերով:

§ 99. Յերեք առակերտների՝ Վաչիկի, Սուրիկի և Գուրգենի անունները...—Այս յերեք հաղափներից՝ Յերեվանից, Թիֆլիսից, Բազմից...

ԿԱՆՈՆ. Բազմակի (մեկից ավելի) բացահայտիչների բացահայտյալը, ինչպես և բազմակի բացահայտյալների բացահայտիչը, հոգնակի չի դրվում:

IV. Անվան լեզվ դերանվան

§ 100. Սահակն այստեղ է. լեռն նրան քիչ առաջ տեսա:— Աշակերտները բախում են. նրանք մարզանքով են զբաղված:— Մուկուչն ու Ջավենը լավ են լերգում. բոլորս լարված լսում ենք նրանց:— Գյուղացին լերեք վորդի ունեք, վորոնցից մեծը տասնեկու տարեկան եր:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Գոյականները թվով համաձայնում են այն գոյական անվան կամ դերանվան հետ, վորի փոխարեն դրվում են խոսքի մեջ՝ մի անգամ արդեն հիշատակված անունը կամ դերանունը չկրկնելու համար. լեզակի անվան փոխարեն լեզակի դերանուն է դրվում, իսկ հոգնակի կամ բազմակի անունների տեղ՝ հոգնակի դերանուն:

§ 101. Ահա այն աշակերտները, վորոնք ցուցահանդես ելին գնացել:—Ահա այն գրքերը, վորոնք յերեկ սեղանի վրա ելին դրված:—ահա այն գրքերը, վոր լերեկ սեղանի վրա ելին դրված:—Ահա այն աշակերտները, վորոնց յես տեսա:—Ահա այն գրքերը, վոր յես տեսա:—Ահա այն բաժակները, վոր նոր եմ գնել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Վոր հարաբերական դերանունը թվով միշտ համաձայնում է անձնավորութուն ցույց տվող գոյականի հետ (աշակերտները... վորոնք... վորոնց). իր ցույց տվող հոգնանակի գոյականի հետ կարող է համաձայնել, լեթե վոր հարաբերական ուղղական հոլով է դրվում (գրքերը, վորոնք այստեղ են), կամ կարող է լեզակի դրվել (գրքերը, վոր այնտեղ են): Իսկ յեթե այս դեպքում վոր հարաբերական հայցական հոլովի իմաստով է գործածված, թվով համաձայնեցնել չի կարելի. որինակ՝ չի կարելի ասել՝ այն գրքերը, վորոնց յես տեսել եմ... այն քարերը, վորոնց դու ջարդել ես. պետք է ասել՝ այն գրքերը, վոր յես տեսել եմ. —այն քարերը, վոր դու ջարդել ես:

ՀԱՐՅԵՐ.

ՅԵՐԵ կարելի չէ ասել՝

1. ա. Այս լերեխաները կորցրին իրենց հորը:

բ. Այս լերեխաները կորցրին իրենց հայրերին:

2. ա. Աշոտն ու Մինասը գնացին իրենց ցանկացած տեղը:

բ. Աշոտն ու Մինասը գնացին ամեն մեկն իր ցանկացած տեղը:

3. ա. Առյուծն ու վագրը գազան են (ինչ են):

բ. Այս առյուծն ու վագրը մեր գազանանոցի ամենահետաքրքրական գազաններն են (ինչերն են):

4. ա. Յես բոլորիդ ինձ քնկեր եմ կարծել (ինչ):

բ. Յես բոլորիդ իմ քնկերներն եմ կարծել (ինչերը):

Զ. ՎՈՐՈՇՈՂ ՀՈՂԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

§ 102. 1. Յեվ ինչո՞ւ միայն նա լերգի, միայն նա.—

Հովակիմը, Կարոն, Սողոմոնը, Մարգարը...

Իսկ Իվանը, Յուսուֆը, Չուսկ-Ֆուսկ...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ամենագրեմ»)

2. Արշակն ու Տիգրանն առաջից ելին գնում, իսկ Ջավենը, Սիսակն ու Վաչիկը՝ յետևից:—Հեռվից լերեւում ելին Յերեանն ու Բանաբեոր:—Շուտով ճանապարհորդները տեսան իրենց մյուս ընկերներին՝ Մկրտչին ու Միքայելին:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Հասուկ անուններ, նույնիսկ առանց վորոշող վերադրի, րոտ ինքյան վորոտ են, ուստի լեզվ վորոշող հոդով են գործածվում:

§ 103. Կովը, ձին. վոչխարը, գոմեշն ընտանի կենդանիներ են:—Առյուծը, վագրը, բորենին գազաններ են:—Այս տարի ցորենն առատ է, բրինձը՝ սակավ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Առարկայի սեռ կամ սեռակ ցույց տվող հասարակ անուններ, առանց վորոշող վերադրի, գործ են անվում վորոշող հոդով:

§ 104. Մի անգամ հեռվից մի ոտաբական լեկավ աչքտեղ: Ոտաբական տարրերնակ բաներ եր պատմում իր տեսած լերկրի մասին:

Որը մթնեց:—Դիշերը վրա հասավ:—Յերկինքն ամպեց:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Խոսողին առաջուց ծանոթ կամ խոսքի մեջ մի անգամ աղեն հիշված առարկայի անունը վորոշող հոդով է գործածվում, յեթե նույնիսկ վորոշող վերադր չունի:

§ 105. 1. Ես վոր պատահեց, մեր Դավիթ հսկան

մի մանուկ եր դեռ յոթ-ութ տարեկան...

2. Սասմա սարերից շատ ու շատ հեռու

թնդում եր նրա հոչակն ահարկու...

3. Բայց հիմի, չեմք վոր յեկավ ծերացավ,
են անան սիրտը ներս սողաց մի ցավ...
4. Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետև
իմ թուրը կապի, Սասուն պահպանի...

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Վորոշող վերադիր ունեցող անունները վորոշող հոդով են գործածվում:

Վորոշող վերադիր լինում են՝

ա) Հասուկ անունները յեվ սեռի իմաստով գործածված հասարակ անունները (Դավիթ հսկան, Դավիթ թագավորը, Աշուղ Զիվանին, մարտ ամիսը):

բ) ցուցական ածական դերանունները (են անան սիրտը, այս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը):

գ) սացական ածական դերանունները (իմ թուրը, քո թուրը, նրա թուրը, մեր, ձեր, նոցա, իրենց):

§ 106. Մերունի Ոհանը յերկու վորդի ուներ. մեծը (մեծ վորդին) արհեստով եր պարապում, իսկ փոքրը (փոքր վորդին)՝ յերկրագործությամբ:

Իմ մատիտը տամ, քոնը (քո մատիտը) տուր:—Սպիտակ բլուզը հանեց, սևը (սև բլուզը) հագավ:

Այս հինգ խնձորը վերցրու, չորսը (չորս խնձորը) թող մնա:—Շատը գնաց, քիչը մնաց:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Յեր վորեվ գոյական անուն խոսքից դուրս է բնկնում կամ գեղջվում է՝ կրկնություն չափելու համար, այդ դեպքում անվան ածական կամ սացական վերադիրը ք կամ ց հոդով է գործածվում:

Յեր սացական վերադիրը ձայնավորով է վերջանում, կրկնականի հոդով է վերջանում (քոնր, նրանր, Արշակինր):

§ 107. Յերեվան քաղաքը գտնվում է Հրազդան գետի ափին:—Դիտե՛ս, Արեակ, թե Պողոսն ո՛ւր ե:—Լսի՛ր, հորեղբայր, քեզ կանչում է նա:—Այսոր սենք Թիֆլիս հասանք:—Գնանք մեր տուն:—Այս շաբաթ այստեղ կլինի:—Ճանապարհորդները հինգ կիլոմետր գնացին:—Սոխակի դալլալը լսվում է հեռվից:—Վահանի գրվածքը լույս է տեսել:—Յես գրում եմ քո մատիտով:—Քո գրքից... քո գրքում... Մենք տանում են խնձոր գնեցինք:—Տղա, աղջիկ, մեծ ու փոք, բոլորն եսկուրսիա գնացին...

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Նշանակությամբ վորոշ գոյականները վորոշող հոդ չեն առնում, յեր գործ են ածվում իբրեւ ուղղական

վերադիր (Յերեվան քաղաք), կոչական (գիտե՛ս, Արեակ), սեղի հայցական (Թիֆլիս հասանք), ժամանակի հայցական (այս շաբաթ այստեղ կլինի), չափ ու քանակի հայցական (հինգ կիլոմետր գնացին), սեռական վերադիր (սոխակի դալլալը, Վահանի գրվածքը), բացառական, գործիական ու ներգոյական հոլովներով (իմ գրքով (ք), գրքից (ք), գրքում (ք)):

Խոսքին ուժ տալու համար քվարկվող բառերը նույնպես անհոդ են գործածվում (Տղա, աղջիկ, մեծ ու փոք... գնացին):

Է. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 108. Դիտեցե՛ք բառերի դասավորությունը խոսքի մեջ յեվ որենցեք համեցե՛ք:

Ա. 1. Յերեկ առավոտյան մեր պարտիզում Գրիգորենց Արամը մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել է (սովորական շաբաղասութուն):

2. Յերեկ առավոտյան է մեր պարտիզում Գրիգորենց Արամը մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե, որինակ, չեղեկոյան):

3. Մեր պարտիզում է Գրիգորենց Արամը յերեկ առավոտյան մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե, որինակ, ձեր պարտիզում):

4. Գրիգորենց Արամն է յերեկ առավոտյան մեր պարտիզում մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե, որինակ, Մկրտիչը):

5. Մեր բարձր խնձորենու նյուղն է յերեկ առավոտյան մեր պարտիզում Գրիգորենց Արամը կոտրել (և վոչ թե՝ տանձի) և այլն:

Բ. 1. Յերեկոյան Բազրատը կառքով Յերևանից Փարաքարի կողմով վերադառնում եր Վաղարշապատ:

1. Յերեկոյան եր Բազրատը կառքով Յերևանից Փարաքարի կողմով վերադառնում Վաղարշապատ:

3. Բազրատն եր կառքով Յերևանից Փարաքարի կողմով վերադառնում Վաղարշապատ:

4. Բազրատը յերեկոյան Յերևանից կառքով եր Փարաքարի կողմով վերադառնում Վաղարշապատ:

5. Փարաքարի կողմով եր Բազրատը յերեկոյան կառքով Յերևանից վերադառնում Վաղարշապատ, և այլն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Սովորական շաբաթասուրբյան ժամանակ խոսքի մեջ բայն ամենից վերջն է դրվում, իսկ բայի լրացումներ բայից առաջ են դրվում. ամեն մի լրացման լրացում առաջից դրվում է այն բառի վրա, վորի իմաստն ինքը լրացնում է: Յուրաքանչյուր խոսք ունի իմաստի շեռ, վորի փոփոխումից կախում ունի բառերի այս կամ այն տեսակի դասավորությունը խոսքի մեջ (ինչպես յերեկում է վեր բերած որինակից):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ խոսքեր կազմեցե՛ք յե՛կ իմաստի շեռն համապատասխան փոփոխեցե՛ք բառերի շաբաթասուրբյունը:

Դիտեցե՛ք վերադիր բառերի շարադասությունը ստորև բերված խոսքերի մեջ և աշխատեցե՛ք կանոններ հանել:

1. Մեր զրադարանի այս մյուս հիսուն նոր գնած գեղեցիկ զրքերը:

2. Դպրոցի այս մեծ դասասենյակը:

3. Իմ այս միջանի թելի գլաները:

ԿԱՆՈՆ. Յուրաքանչյուր վերադիրց առաջ դրվում են անմիջապես իր լրացումները, իսկ վերադիրներն իրենք հետևյալ կարգով են շարադասվում. 1) ստացական վերադիրներ. 2) ցուցական ածականներ. 3) անորոշ ածականներ. 4) թվական ածականներ. 5) բայածականներ. 6) վորական ածականներ. 7) բացահայտող ուղղական վերադիր:

Յուր ավելք, թե ինչպես է փոխվում նախադասություններն իմաստը՝ բառերի շարադասությունը փոխելով. —

1. ա. Ձեռքն մատանի ունեցող մի մարդ:

բ. Մի ձեռքն մատանի ունեցող մարդ:

2. ա. Մի սիրուն մարմարից շինած քանդակ:

բ. Մի սիրուն մարմարից շինած մի քանդակ:

3. ա. Այս լավ մարմարից շինած քանդակը:

բ. Լավ մարմարից շինած այս քանդակը:

4. ա. Գեղեցիկ արծաթի ժամացույց:

բ. Արծաթի գեղեցիկ ժամացույց:

5. ա. Փսան անասունների գոմ:

բ. Անասունների բան գոմ:

6. ա. Կտրած ծառի ճյուղերը:

բ. Ծառի կտրած ճյուղերը:

7. ա. Այսօր փողով գնած իրեր:

բ. Փողով գնած այսօր իրեր:

Սովորական է, արդյոք, բառերի դասավորությունը հետևյալ խոսքերի մեջ. յերե սովորական չի, ինքներդ սովորական ձեզով դասավորեցե՛ք:

- | | |
|---------------------------|--------------------------|
| 1. Ծփում է ծոփն ալեծածան, | 2. Միայն ալիքը Վանա ծովի |
| ծփում է սիրտը տղի. | մեղմ գիպչում են ափերին, |
| գոռում է ծոփն անհղաձայն, | հրհրելով հեռանում են |
| նա կովում է կատաղի... | շրշունջներով անմեկին: |
- (ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Աղթամար»)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Ալեծածան ծովը, — տղի սիրտը, — անհղաձայն գոռում է, — կատաղի կովում է, — Վանա ծովի ալիքը, — անմեկին շրշունջներով: **ՍԱՀՄԱՆՈՒՄ.** Բառերի սովորական շաբաթասուրբյան փոփոխած, շուռ սկած ձեզ շրջում է կոչվում (ալիքը Վանա ծովի = Վանա ծովի ալիքը):

Ուղղեցե՛ք հետևյալ խոսքերի մեջ շրջումները.

1. Ձեր լավում այնտեղ սուրոցը շոգեմեքենայի և վոչ ել արշալուսվող առավոտի հետ՝ կանչերը գործարանների... Անծանոթ եր նրանց աղմուկն ու ժխորը մեր հսկա քաղաքների:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անհավասար կռիվը»)

2. Այնտեղ այսոր կանգնել են քաղաքները վիթխարի, գործաբանները հսկա, ծխնելուղները լերկնաձիգ, մեքենաներն աղվելոտ... Մեքենաները հսկա, ճշտապահ, սրտերում շոգի ու կըրակ, առած ծանրությունն աշխարհի, անցնում են ծովեր ու ցամաքներ, անցնում են լեռներ ու անդունդներ վիթխարի... Մեքենաներն ամենի, վոր ցանցել են յերկրի գունդը հնամի:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Մեքենաներն ու շահագործվող մարդը»)

Կարելի՞ չե այսպիսի շրջումներ անել:

1. Յերկինք էմ նայում գաշտից գեղեցիկ (փոխանակ՝ գեղեցիկ դաշտից):
2. Ձայներ են թռչում քնարից սիրուն (փոխանակ՝ սիրուն քնարից):
3. Արծիվը թռավ այն սարից բարձր (փոխանակ՝ այն բարձր սարից):

ԿԱՆՈՆ. Հայերենում ածականները կամ առհասարակ վերադիր բառերը միայն այն ժամանակ կարելի չե հետադաս դնել (շրջում անել), յերբ նրանց գոյականներն սկզբնական ձևով

են դրված (ուղղական հոլով)։ Իսկ չեթե գոյականը հոլովված է, բացի ուղղականից, վորեն ալ հոլով է դրված, այս դեպքում չի կարելի շրջում անել, հակառակ դեպքում կամ վոճի յերկդիմութուն առաջ կգա, կամ տգեղ արտահայտութուն կստացվի։ Որինակ, վերեի որինակներից—արծիվը թռավ այն սարից բարձր, կարող ենք հասկանալ՝ արծիվն այն սարից բարձր թռավ և վոչ թե՝ բարձր սարից թռավ։

VII. ԱՍԱՑՎԱԾ ՅԵՎ ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. ԼՐԱՑԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԱՍԱՑՎԱԾ ՅԵՎ ԽՈՍՔ. ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ ՍՍԱՑՎԱԾԻ ՄԵՋ

§ 109. Աշակերտը գնաց տուն՝ իր դասը պատրաստելու ամար։

Աշակերտը գնաց տուն, վոր իր դասը պատրաստի։

Այս յերկուսը ասացվածներ են. ամեն մեկը մի լրիվ, ամբողջական միտք է հայտնում։

Ասացվածի վերջը վերջակետ է դրվում։

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Լրիվ արտահայտված միտք կոչվում է ասացված. Յեթե ասացվածը կազմված է մի խոսքից, կոչվում է պարզ ասացված (ինչպես առաջին որինակը, վորի մեջ մի բայ կա—գնաց)։ Իսկ յեթե ասացվածը կազմված է յերկու կամ ավելի խոսքերից, կոչվում է բարդ ասացված (ինչպես յերկրորդ որինակը, վորի մեջ յերկու խոսք կա և յերկու բայ—գնաց, պատրաստի)։

Վորպեսզի իմանանք, թե բարդ ասացվածի մեջ քանի խոսք կամ նախադասություն կա, պեսք է հաշվենք դիմավոր բայեր։

Չպիտի մոռանալ, վոր բայը կարող է դրված չլինել (գեղջվել), բայց գորությունք հասկացվել. այդ բայերն ել պեսք է հաշվել։

ԿԱՆՈՆ. Ամեն մի ասացվածի վերջը վերջակետ է դրվում։ Գրելիս ամեն մի ասացված մեծատուով է սկսվում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Հաշվեցե՛ք, թե ստեղծված բերված ասացվածներից յուրաքանչյուրի մեջ քանի խոսք կա, յեվ արագրելիս ամեն մի ասացվածի դիմացը նշանակեցե՛ք.

Ընթերցարանը բաց եր. հաճախորդները հստած կարդում ելին (2)։— Սուրբիկն առավոտյան վաղ վեր կացավ, շտապ նախաճաշ արավ, գրքերը վերցրեց ու դպրոց գնաց։— Աշխոհաբանը այսօր նիստ ունի. որակարգում մի քանի հարցեր կան, վորոնցից ամենադժարվորը դպրոցական կոոպերատիվ կազմակերպելու հարցն է։— Լույսը նոր եր բացվել, յերբ Աշոտը վեր կացավ, գլխատները հագավ, լվացվեց, նախաճաշելուց հետո քայլերն ուղղեց դեպի դպրոց, ուր հավաքվելու յեր ամբողջ աշակերտութունը՝ դպրոցական եքսկուրսիայի համար. յեղանակը բավականին նպաստավոր եր—յերկինքը պարզ եր, արևի ջերմութունն ախորժելի։

Սոսքերի մասին պետք է իմանալ հետևյալը—

Սոսքերը կարող են հետևյալ տեսակներն ունենալ.

1. Լրացումներին նայելով՝

ա. Համառոտ խոսք, վորը կազմվում է միայն յենթակայից և բայից. որ.՝ անձրե յեկավ։ Արևը ծագեց։

բ. Ընդարձակ խոսք, վոր բացի յենթակայից և բայից, ունի նաև յնդիրներ, պարագաներ և վերադիրներ. որինակ՝ յերեկ գլուղում առատ անձրե յեկավ։

2. Իրական է բացատրական խոսքեր, որ.՝ բլուրը բարձր է—դրական խոսք է, իսկ բլուրը բարձր չէ—բացասական խոսք է։

Բացասական խոսքեր կազմվում են բայերի վրա վոչ, չ, մի, մակբայներ գնելով (վոչ կտեսնեմ, վոչ կասեմ.—չտեսնես, չասես.—մի տեսնի, մի ասի)։

Դիտեցե՛ք հետևյալ բացատրական խոսքերը.

Չուտել չի կարելի.—չկատարել չեր լինի.—չտալ հնարավոր չեր.—չգնալ չեղավ։

ԿԱՆՈՆ. Յերկու բացասական մի խոսքի մեջ խոսքին դրական նշանակութուն է տալիս։

3. Հարցական խոսքեր. որինակ՝ 1. քանիսն այսօր կպավ ձեր տան լուսամուտի ապակուն. 2. քանիսն այսօր կպավ ձեր տան լուսամուտի ապակուն. 3. քանիսն այսօր կպավ ձեր տան լուսամուտի ապակուն և այլն։

Դիտեցե՛ք հետևյալ հարցական հարցական խոսքերը.

1) Գողն թնշ կուզի, — մութ գիշեր։—

Այդ դեռ յես, Աշոտ։—

2) —Ո՞վ է խաղաղ մեջ-գիշերին

Բնած գետը վրդովում...

—Ո՞վ է աստղոտ զով գիշերին
Լուսնի շողով զարդարվում...
—Ո՞վ է չքնաղ բարիլուսին
Ծաղիկները համբուրում...
—Նա հեղ գետի լուռ փերին ե...

(Բանաստ. Ավ. Իսահակյան)

- 3) Արդյոք նորից յերգներն են թափառում,
Սիրո անուշ նվագներն են ինձ կանչում.
—Դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
Սարից իջնող աղբյուրներն են կարկաչում.
—Արդյոք դժև լեռ նորից հողիս մեղմ հուզում.
—Այն գիշերն է, այն հուշերն են տրամաշուք,
Այն աստղերն են ցուրտ յերկնքում յերազում:

(Բանաստ. Վ. Տերյան)

- 4) Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրե,
Ուժը մեր բոսոր,
Ու վառ բախտը մեր
Տիեզերական:
Ո՞վ ունի այսօր...
Մենք ենք, վոր նոր ենք, հազար ենք ու բյուր:
(Բանաստ. Յե. Զարենյ)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. ձառասանական հարցական խոսքերն ըստ յերևույթին հարցական են. հարցնողն ինքը գիտե պատասխանը, բայց հարց է տալիս և յիրքեմն ել իր տված հարցին պատասխանում է:

Դիտեցե՛ք ստեղծված հարցական խոսքեր.
Յե՛ս չեմ կարող կարդալ—յես կարող եմ կարդալ:
Ո՞վ վախկոտ, յես—յես վախկոտ չեմ:
Վե՛ր գիրքն ասա, վոր կարդացած չլինեմ—բոլոր գրքերը
կարդացել եմ:
Ի՞նչ ասես, վոր արած չլինի—ամեն ինչ արել եմ:
ԿԱՆՈՆ. Դրական ճարտասանական հարցերը բացասական նշանակություն ունեն, իսկ բացասականը—դրական:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ Պարզեցե՛ք, քե ստեղծված բարդ ասացվածների մեջ խոսքերն ի՛նչ հարաբերություն ունեն իրար հետ, արդյո՞ք, նրանք բերականորեն իրարից անկախ են, քե՞ խոսքերից մեկը մյուսի լրացումն է դառնում:

1. Մենք գնացինք տուն և մեր դասերը պատրաստեցինք:—
Տիգրանն այսօր հիվանդ էր, ուստի նա դասի չեկավ:—Մենք այստեղ կարդում ենք, իսկ դուք այդտեղ գրում եք:—Ահա լեկավ Վաղգենը. նա գյուղ էր գնացել:

2. Մենք գնացինք տուն, վոր մեր դասերը պատրաստենք:—
Վորովհետև Տիգրանն այսօր հիվանդ էր, ուստի նա դասի չեկավ:—Յերբ մենք այստեղ կարդում ենք, այն ժամանակ դուք այդտեղ գրում եք:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. ա) Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքեր կարող են բերականորեն իրարից անկախ լինել, այսինքն, մեկը մյուսի յենթական կամ այլ տեսակի լրացումը չլինել յեվ առանձին վերջածո՝ ուրույն միտք արտահայտել (ինչպես վերևի առաջին չորս խոսքերը). բարդ ասացվածի մեջ խոսքերի այդ կապակցությունը կոչվում է **համադասական կապակցություն**:

բ) Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքեր կարող են բերականորեն իրարից անկախ չլինել, նրանցից այս կամ այն կարող է ծառայել մի ուրիշ խոսքի համար իբեկ լրացում (որ.՝ *յենթակա, կրող լրացում, տեղի արագա և այլն*) յեվ, այդպիսով, ուրույն միտք արտահայտել, այլ ստորագրավել մի ուրիշ՝ ուրույն կամ անկախ միտք արտահայտել խոսքի (ինչպես վերևի յերկրորդ չորս որինակները). բարդ ասացվածի մեջ խոսքերի այդ տեսակի կապակցությունը կոչվում է **ստորագրական կապակցություն**: Ստորագրական կապակցության մեջ ուրույն կամ անկախ միտք արտահայտել խոսքը կոչվում է **գլխավոր խոսք** կամ **նախադասություն**, իսկ սրա միտքը լրացնող, իրեն լրացում ծառայող խոսքը կոչվում է **յերկրորդական կամ լրացական խոսք**:

1. Համադասական կապակցություն

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. կազմեցե՛ք բարդ ասացվածներ վորոնց խոսքերը կապված լինեն՝

1. յեվ շողկապով (որ.՝ յես գնացի և վերադարձա).
2. ու » (տեղ հասանք ու յետ դարձանք).
3. ել » (յես ել գնացի, դու ել գնացիր).
4. մանավանդ շողկապով (յես սոված եմ, մանավանդ սաստիկ հոգնած եմ).
5. վոչ միայն—այլև շողկապով (վոչ միայն մոլթ ե, այլև ցուրտ ե).

6. քե—քե շողկապով (թե կերել եմ և թե խմել)։
7. յե՛վ - յե՛վ » (ե՛ կերել եմ, ե՛ խմել)։
8. վորք—վորք » (վորք տանն ե նստած, վորք՝ պարտիզում)։
9. կա վոր—կա վոր շողկապով (կա վոր քաղցր ե, կա վոր թթվաշ)։
10. նախ—ապա—վերջապես շողկապով (նախ՝ հայտնի ես, ապա՝ ծեծել ես, վերջապես՝ նրա դանակը թոցրել ես)։
11. այսինքն, այն ե շողկապով (գլուղում յերեք շերտավորում ե առաջացել, այն ե՝ Հրավորներին, միջակներին և կուլակներին)։
12. ուսի, նետվաբար շողկապով (դու չես աշխատում, ուստի չես առաջադիմում)։
13. վոչ թե—այլ շողկապով (վոչ թե պիտի խաղաս՝ այլ պիտի պարապես)։
14. կամ—կամ շողկապով (կամ պիտի խաղաս, կամ պիտի պարապես)։
15. քե շողկապով (որ՝ դու պիտի կարդաս, թե՞ գրես)։
16. սակայն, այնուամենայնիվ, բայց յեվ այնպես շողկապով (հիվանդ եմ, բայց և այնպես կկատարեմ)։
17. բայց, բայց յեվ այնպես շողկապով (նա պիտի գար, բայց չեկավ)։
18. իսկ շողկապով (յես կարդում եմ, իսկ դու գրում ես)։
19. մինչդեռ շողկապով (դու նոր ես վեր կենում, մինչդեռ այժմ դպրոցում պիտի լինեիր)։
20. քե վոչ շողկապով (պետք ե գնանք, թե վոչ կուշտանք)։
Այս տեսակի կապակցությունները համադասական են. այդ առաջվածների մեջ խոսքեր փոխանցվում են իրարից անկախ եմ, մեկը մյուսի լրացում չեն դառնում։
Համադասությունները կապակցվող խոսքերի շողկապները կարելի չե չղնել. որիննակ՝ փոխանակ ասելու գնացի և տեսա, կարելի չե ասել՝ գնացի, տեսա։
Ինքնեղ կապակցե՛ք համադաս խոսքեր՝ առանց շողկապների։

ԿԱՆՈՆ. Համադաս, մտքով միմյանց մոտիկ խոսքերն իրարից բաժանվում են ստորակետով։ Համադասական յեվ, ու շողկապներից առաջ ստորակետ չի դրվում, յեթե նրանցով կապվող խոսքերի յեթական նույնն ե (որ՝ յես գնացի և նրան տեսա կամ՝

յես գնացի ու նրան տեսա)։ Յեթականները տարբեր լինելու դեպքում ստորակետ դրվում ե (որ՝ յես գնացի, և դու չեկար։—Նստած ես, ու քո միտքն ուրիշ տեղ ե)։

ԿԱՆՈՆ. Յեթե յեվ, քե շողկապները կրկնվում են բոլոր համադաս խոսքերի կամ խոսքի հարանման իմաստով լրացումների սկզբում, այս շողկապներից առաջ դրվում ե ստորակետ, իսկ շողկապների վրա կարող ե շեշտ դրվել (որ՝ և՛ յես, և՛ դու, և՛ նա հանցավոր ենք)։ Յեվ հոգվում եմ, և՛ լալիս)։

ԿԱՆՈՆ. Յերբ կամ շողկապը բացառական նշանակություն ունի, առաջից ստորակետ չի դրվում (որ՝ Մասիսը կամ Արարատը բարձր սար ե)։

ԿԱՆՈՆ. Յերբ համադաս խոսքերից յերկրորդի մեջ բայը գեղջվում ե, բուժ ե դրվում (որ՝ Աշոտը Յերևան ե գնում, իսկ Հուսիկը՝ Քանաքեռ)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Լրացրեք հետևյալ համադասական կապակցությունները համապատասխան շողկապներով կամ շողկապական բառերով։

Որիննակ՝ յես գնում եմ... դու մնում ես—յես գնում եմ, իսկ դու մնում ես։—Յես... գնացի, դու... գնացիր—յես ել գնացի, դու ել գնացիր։

1. Վոչ միայն Գրիգորը... Տիգրանն ել եր յեկել։
2. Ինչպես Աշոտին ես ասել... Սերոբին ասա։
3. Մեկը լավ աշխատում ե... պարտապ նստել ե։
4. Մեր տանն ե լինում... այգում։
5. Նախ Արմենին եմ տեսել... Գրիգորին և... Գեղամին։
6. Գուգենը քե սաստիկ հոգնած ե և... սաստիկ քաղցած։
7. Վորք բանն ե վերցրել... բրինձ։
8. Կա վոր մեծ ե... փոքր։
9. Լավ սնունդ չի ստանում... չի առողջանում։
10. Վոչ թե տուն պետք ե գնաս... դպրոց։
11. Լավ պետք ե աշխատե՞ք... չենք առաջադիմի։
12. Դու ծիծաղում ես... լաց պետք ե լինելիք։
13. Ժամի յոթին պետք ե գալիր... ութին ես յեկել։
14. Զուրն առատ ե... նրա արտը չորացավ։
15. Վոտքով պետք ե գնանք... ձիով։
16. Կամ ալսպես պետք ե անես... աչնպես։
17. Մահակը կգա... Մահակը, այդ ինձ համար միևնույն ե։

18. Դու լավ բան ես արել, ... լին չեմ ներում:
19. Ել խոսք չես թողել՝ նրան ասել ես, ... լռիր:
20. Զողը կրակից սաքացել եր, ... պիտք է լայնանար:

2. Ստորագասական կապակցություն

- § 110. 1. Աշակերտը մտավ գրախանութ, վոր գիրք գնի:
 2. Աշխորհրդի անդամներն հավաքվեցին, վոր ժողով անեն:
 3. Գյուղացին արտը գնաց, վոր ցորեն հնձի:
 Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին.

1. Ինչո՞ւ աշակերտը գրախանութ մտավ:
2. Աշխորհրդի անդամներն ինչո՞ւ հավաքվեցին:
3. Գյուղացին ինչո՞ւ գնաց արտը:

Ցույց սի՛ք, թե առաջին ասացվածի մեջ վոր նախադասությունն է ուրույն միտք արտահայտում և վորը իբրեւ լրացում ծառայում:
 Կարելի՞ լինի միայն այսօրին ասել՝ աշակերտը մտավ գրախանութ:

Կարելի՞ լինի միայն այսօրին ասել՝ վոր գիրք գնի:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Լրացական խոսքերն, առանձին վերցրած, քերի լինե, ուրույն միտք չունեն. նրանք մի ուրիշ խոսքի հաջորդականություն են իբրեւ լրացում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք բարդ ասացվածներ՝ վերել բերված 3 ասացվածների որինակով: Ցույց տվե՛ք ձեր կազմած ասացվածների գլխավոր (ուրույն միտք արտահայտող) և յերկրորդական (լրացական) մասերը:

Ի՞նչ շաղկապով են կապվում այդ խոսքերը:

1. Յերկրորդական նպատակի պարագայական խոսք

§ 111. Աշակերտը մտավ գրախանութ՝ գիրք գնի: Գյուղացին արտը գնաց՝ ցորենը հնձի:

Այս որինակներից յերևում է, վոր ստորադասական կապակցությունն է կարող և արտահայտվել շաղկապներով (շաղկապավոր կապակցություն) և առանց շաղկապների (անշաղկապ կապակցություն):

Ինքներդ կազմեցե՛ք ստորադասական կապակցությամբ խոսքեր՝ առանց շաղկապների:

ԿԱՆՈՆ. Յերե ստորադասական կապակցության վոր ժողկայր (չգիտե՞ք վոր հարաբերական կամ շաղկապական դերան-

վան հետ) գեղջվում է, այդ պեպում գեղջված ժողկայրի փոխարեն բուր է դրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցե՛ք նման ասացվածներ յեւ վոր ստորադասական ժողկայր գեղջեցե՛ք ու գրի առե՛ք:

Պարզեցե՛ք, թե այդ կապակցության լրացական խոսքը գլխավոր նախադասության վոր բառի իմաստն է լրացնում կամ վոր բառի լրացումն է դառնում և ի՞նչպիսի լրացում. նրա ի՞նչ թերին է լրացնում:

Յեթե միայն ասենք՝ աշակերտը մտավ գրախանութ, — արդիւք, կիմանանք, թե աշակերտն ինչո՞ւ մտավ գրախանութ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Այն լրացում խոսք, վոր լրացնում է գլխավոր նախադասության բայի գործողության նպատակի պարագան, կոչվում է՝ յերկրորդական նպատակի պարագայական նախադասություն: Ցույց սի՛ք նպատակի պարագայական խոսք.

1. Կարծես հրաշունչ վիշապի նման,
 ուզում են շնչել ու իրենց քարշել
 անհուն բարձունքից փախչուն անողերը,
 վոր նրանց թաղեն մշուշ ծխի մեջ:
 (ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Գործարան»)

2. Վերջը տեսա՛յ, վոր ձար չէլավ,
 թեկն ատավ, ինքն ել փախավ,
 փախավ, կորավ, վոր ել ենպես
 դատարկ, անանկ ու սևերես
 վոր պատանի պարտքատերին,
 վոր յերես լույս աշխարհին:
 (ՀՈՎՀ. ԹՈՒՄ, «Մերախո վաճառականներ»)

§ 112. Աշակերտը մտավ գրախանութ, վոր գիրք գնի — աշակերտը մտավ գրախանութ՝ գիրք գնելու համար: — Գյուղացին արտը գնաց, վոր ցորենը հնձի — գյուղացին արտը գնաց՝ ցորենը հնձելու համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ի՞նչ տարբերություն կա նախորդ §-ում անջատման դից (—) այս կողմ և այն կողմ գտնվող ասացվածների մեջ՝ 1. իմաստի տեսակետից, 2. ձևի տեսակետից:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Ստորադասական կապակցություն ունեցող բարդ ասացվածը կարելի լին պարզել, այսինքն՝ այնպես արահայտել, վոր այնպիսի բարդ ասացված չլինի, այլ՝ պարզ ասացված, յերևու դիմա-

վոր բայերի փոխարեն՝ մի գիմնական բայ լինի: Բարդ ասացվածք պարզելով՝ մենք նրա իմաստը չենք փոխում:

ԿԱՆՈՆ. Բարդ ասացվածք պարզելիս, ստորադասական շաղկապն այլեմի չենք դնում, լրացական խոսքի բայը փոխարինում ենք դերբայով (դնելու, ժողով անելու, հնձելու—ապառնի դերբայ) կամ վորեկն այլ կերպ, վոր կսեսնենք ստորել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Պարզեցե՛ք նպատակի պարագայական խոսքերը հետևյալ հասկացման մեջ ու գրի առե՛ք:

Որինակ՝ Սերոբը գնաց, վոր ջուր բերի—Սերոբը գնաց ջուր բերելու կամ՝ Սերոբը գնաց ջրի:

Ուսուցիչը մտավ դասարան, վոր դաս պարապի: Աշակերտը վեր կացավ, վոր դասը պատասխանի: Նա մոտեցավ գրատախտակին, վոր ուսուցչի ասածը գրի: Զննչիչը վերցրեց, վոր սխալ գրածը ջնջի և ուղղիչը գրի: Աշակերտները տետրակները հանեցին, վոր ուղղածը գրի առնեն: Ուսուցիչը մեկ-մեկ մոտենում եր աշակերտներին, վոր սխալ գրածները բացատրի և ուղղել տա:

II. Ժամանակի պարագայական խոսք

§ 113. Աշակերտը քնից վերկացավ, յերբ լույսը բացվում եր:—Մենք տուն հասանք, յերբ արևը մտնում եր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք նման ասացվածքներ: Գտե՛ք գլխավոր յեվ յերկրորդական մասերը: Պարզեցե՛ք, քե յերկրորդական խոսքը գլխավորի համար իբրեմ ի՛նչ լրացում ե ծառայում: Պարզեցե՛ք վերոհիշյալ յերկու յեվ ձեր կազմած բարդ ասացվածքները:

Կանոն հանեցե՛ք, քե լրացական ժամանակի պարագայական խոսքերն ի՛նչպես ենք պարզում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք ժամանակի պարագայական խոսքեր, վորոնք գլխավոր խոսքի հետ կապված լինեն հետևյալ շաղկապներով:

1. հեռից վոր, քե չե շաղկապներով.—որինակ՝ հենց վոր դու չեկար, յես գնացի:

2. քանի, քանի դեռ շաղկապներով.—որինակ՝ քանի դեռ դու այստեղ ես, նա չի գա:

3. մինչ, մինչդեռ, այնինչ շաղկապներով.—որինակ՝ մինչդեռ յես կարդում էի, դու խաղ էիիր անում:

4. մինչև, մինչև վոր շաղկապներով.—մինչև սենյակը տաքանա, հիվանդի հոգին դուրս կգա:

5. վոր շաղկապով.—վոր լսեցի, վեր թռա, կամ՝ այս վոր լսեցի, վեր թռա:

Այս ասացվածքներում լրացական խոսքը նախադաս ե (գրել-խավորից առաջ), թե՛ հետադաս (գլխավորից հետո):

ՍԱՀՄԱՆՈՒՄ Լրացում խոսքը, տեղին նայելով, կարող ե նախադաս լինել:

III. Ձեզի կամ վորակի յեվ չափ ու քանակի պարագայական խոսքեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ուրիշ տեսակի լրացական խոսքեր դիտելու համար, կազմեցե՛ք բարդ ասացվածքներ՝ ստորել մասնանշած շաղկապներով յեվ որինակներով.—ձեր կազմած բարդ ասացվածքները պարզեցե՛ք ցույց սկսած կամ այլ ձևով:

Ա) 1. այնպես—ինչպես—որինակ՝ գիրքդ այնպես պահիր, ինչպես քո աչքն ես պահում, կամ՝ գիրքդ պահիր, ինչպես քո աչքը—գիրքդ պահիր քո աչքի պես:

2. այնպես, կարծես քե,—վրց վոր.—որինակ՝ այնպես ես զարմանում, կարծես յերբեք չես տեսել:

3. նույնչափ—վորչափ.—նա նույնչափ իրավունք ունի, վորչափ դու:

4. քանի—այնքան.—քանի մեծանում ե, այնքան խելոքանում ե:

5. ավելի—քան.—Վաչիկն ավելի յե աշխատում, քան Վարսիկը:

6. այնպես—վոր.—այնպես բարկացավ, վոր իրեն կորցրեց:

Պարզեցե՛ք, թե այս ասացվածքների մեջ յերկրորդական խոսքերը գլխավոր խոսքի վրա բառն ինչպես են լրացնում, ինչ են ցույց տալիս:

Ինքներդ կազմեցե՛ք ձեզի կամ վորակի յեվ չափի ու քանակի լրացական պարագայական խոսքեր, պարզեցե՛ք այդ խոսքերն ու գրի առե՛ք:

IV. Հիմունքի պարագայական խոսքեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Բ) 1. Վորովհետև, ուստի, այդ պատճառով, ուրեմն.—վորովհետև չեկար, այդ պատճառով չկարողացար տեսնել—չգալու պատճառով չկարողացար տեսնել:

Վորովհետեւ հիւանդ ելիր, դասի չեկար—հիւանդ լինելու պատճառով դասի չեկար—հիւանդ լինելով, դասի չեկար.

2. վոր.—յես գնացի Արամի մօտ, վոր գիրքս բերեմ.

3. քե.—մարդ ել չեմ ուղարկում, թե մի պատասխան բերի.

4. քե, քե վոր, յերե, այն ժամանակ, ուրեմն, ապա.—յեթե յեղանակը լավ լինի, ուրեմն եքսկուրսիա կգնանք.

5. քեյել, քեպես, չնայած վոր, բայց, սակայն, բայց յեկ այնպես, դարձյալ, այնուամենայնիւ.—թեև շատ ցուրտ էր, բայց գնացինք:—Աշտոն այսօր իրեն վատ էր զգում, աշտուամենայնիւ դպրոց չեկավ.

6. ու, ինչ, վորեան, ուր, կուգես, կուզի.—ինչ կուգես արն, նրան բան չի լինի:

7. քեկուզ, մինչեւ անգամ յերե, նույնիսկ յերե, դարձյալ, ելի.—թեկուզ կրակ դառնաս, նրան վոչինչ չես անի:

Պարզեցե՛ք այս ասացվածներում գլխավոր և լրացական խոսքերի հարաբերութիւնը, ցույց տվե՛ք, թե վերն և գլխավոր վերջը լրացական. ի՞նչ անուն կտաք այդ լրացական խոսքերին:

Ինքներդ կազմեցե՛ք ԵՐԺՈՒՆԵՐԻ (պատճառի, նպատակի, պայմանի, հակառակ ճիմումի) պարագայական խոսքեր, պարզեցե՛ք այդ խոսքերն ու գրի առե՛ք:

Ցույց տվե՛ք ասացվածները, խոսքերը, նրանց կապակցությունը, գլխավոր յեկ լրացական մասերը.

1. Գլխատուրթյան մոայլ բնմին դու գլուխդ վայր կբերես. և զանգերը կդողանջեն, և դաշուհնը կփողփողի, ու մկանունք կաղաղակեն, և կլինի շքեղ հանդես, մեծապայծառ տոն ու հանդես կարմիր արյան ու մետաղի:

Յեւ արեւ ծիրանավառ, և յերեկոն ծծմբաշունչ, յերեկոն ու արեգակը արնափրփուր, հրդեհավառ՝ կտեսնեն, թե ի՞նչպես ես դու կրում պատիժը անտրտունջ, թե ի՞նչպես լուռ կանջնջանան քո աչքերն ու դեմքը պալծառ:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Գուրբ»)

2. Կարի՛ր ու կարի՛ր ձմռան որերում, նույնպես գարնանը—որե՛ր գովարար. յերբ ծիծեռնակը իր բունն և հյուսում՝ գարնան վերադարձ անելու համար, իսկ ձագուկները կուշտ ու ապահով՝

մեղտ ձովադում են իրանց մօրը հետ, կարծես ուզում են՝ ուրախ յերգերով ինձ ծաղրի բռնել ու հեգնել հավետ:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Շապիկ յերգը»)

3. Սահում ե մաքուրը, գնդում մեքենան, անգուլ աշխատում ու յերգում են նրանք.
—«Հին Գերմանիա, պատան ենք գործում քեզ համար նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ—գործում ենք անվերջ, անդադար»:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Զուլակները»)

V. Յերկրորդական յեքրակա խոսքեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք ասացվածներ, ստույգ յերկրորդական ասացվածների նմանությամբ յեկ պարզեցե՛ք ցույց տված ձեւով.

Ա. 1. Ուլերի հիւանդ են, նրանք կարող են գնալ—հիւանդները կարող են գնալ:

2. Ով խելք ունի, թող իր գլուխն աղատի—խելք ունեցողը, թող իր գլուխն աղատի:

3. Ով այդ գիտե, նա չի դարմանա—այդ իմացողը չի դարմանա:

4. Ինձ հայտնի յե, վոր Արամն այստեղ է—ինձ հայտնի յե Արամի այստեղ լինելը:

5. Բանն այն չի, վոր միայն ուտես, այլ վոր նաև աշխատես—բանը միայն ուտելը չե, այլ նաև աշխատելը:

6. Ժամանակ է, վոր մենք գնանք— ժամանակ է մեզ գնալու:

ՀԱՐՑ.—Այս լրացական խոսքերը գլխավոր խոսքի վեր բառի համար ի՞նչ լրացում են:

Ցույց տվե՛ք յերկրորդական յեքրակա խոսքերը ստույգ յերկրորդական հասկացում.

Ով քնած էք՝ արթուն կացե՛ք,

Ով արթուն եք՝ յեղե՛ք, կեցե՛ք.

Ով կեցե՛ք եք՝ գնե՛ք կապեցե՛ք...

Ինքներդ կազմեցե՛ք ասացվածներ՝ լրացական յեքրակա խոսքերով.

VI. Յերկրորդական խնդիր խոսքեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Բ. 1. Ով վոր փող ունի՝
 նրանից առ—փող ունեցողից առ:

2. Վորը հավանեմ, այն կվերցնեմ—հավանածս կվերցնեմ:

3. Նա հայտնեց, վոր Արշակը յեկել է—նա հայտնեց Արշակի գալը:

4. Վախենում եմ, վոր նա բարկանա—նրա բարկանալուց եմ վախենում:

5. Չեմ իմանում, թե յեկողն ով է—յեկողի ով լինելը չեմ իմանում:

Ինքներդ կազմեցե՛ք լրացական խնդիր խոսքերը:

VII. Յերկրորդական լրացման լրացում կամ վերադիր (վորո՞ւն է) խոսքեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք ասացվածներ usorել բերված ասացվածների նման յեվ պարզեցե՛ք ցույց տված ձևով:՝

1. Տուր ինձ այն գիրքը, վոր դու կարդացել ես—քո կարդացած գիրքն ինձ տուր:

2. Կատարի՛ր այն խոսքը, վոր քեզ ասել եմ—քեզ ասածս խոսքը կատարի՛ր:

3. Պարտաճանաչ չե՛ս այն աշակերտը, վոր ի՛ր դասը չի պատրաստում—իր դասը չպատրաստող աշակերտը պարտաճանաչ չե՛ս:

Այս ասացվածներում լրացական խոսքերը գլխավոր խոսքի վոր բառի իմաստն են լրացնում:

Կանոն դուրս բերե՛ք, քե՛ լրացման լրացում խոսքերն ի՛նչպես կարելի յե պարզել:

Պարզեցե՛ք հետևյալ ասացվածները.

1. Այն տղան, վոր խաղում էր, յեկավ:

2. Այն գիրքը, վոր քեզ եմ տվել, տուր:

3. Այն քաղաքը, ուր դու յես ապրում, գեղեցիկ է:

4. Այն գիշերը, յերբ դու մրսեցիր, ցուրտ էր:

Այս ասացվածներում լրացական խոսքերն ի՛նչպես են դասավորված:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Լրացական խոսքերը, նայելով տեղին, կարող են լինել նայել միջադաս: Ուրեմն, լրացական խոսքերը գլխավոր խոսքի նկատմամբ, նայելով տեղին, կարող են լինել նախադաս միջադաս յեվ վերջադաս:

Ուղղակի խոսքեր յեվ ուղղակի խոսքերն անուղղակի դարձնելը

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցե՛ք ասացվածներ, վորոնց մեջ լինեն ուղղակի խոսքեր (ուրիշի ասած խոսքեր) յեվ ուղղակի խոսքերն անուղղակի դարձե՛ք usorել բերած որինակների ձևով:

1. Ազատն ասաց. «Յես այսոր հիվանդ եմ, դասի չեմ կարող գալ»:—Ազատն ասաց, վոր ինքն այսոր հիվանդ է, դասի գալ չի կարող:

2. Միսակն ասաց. «Գրիգոր, յես ուժեղ եմ, իսկ դու թույլ ես»:—Միսակն ասաց Գրիգորին, թե ինքն ուժեղ է, իսկ Գրիգորը՝ թույլ:

3. Մինասն ասաց. «Բազրատին տեսա, իսկ Ոննիկին տեսել չկարողացա»:—Մինասն ասաց, վոր Բազրատին տեսել է, իսկ Ոննիկին չի կարողացել տեսնել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Խոսքն ուղղակի յե կոչվում, յերբ ուրիշ խոսքերն անփոփոխ, ինչպես ուրիշն ասել է, մեջ են բերվում: Ուղղակի խոսքն անուղղակի դարձնելու համար առաջին ու յերկրորդ դեմքեր փոխվում են յերրորդ դեմքի, հրամայական յեղանակի բայը փոխվում է բղծականի, իսկ կոչականը դառնում է անուղղակի խոսքի յեմբական կամ գլխավոր խոսքի բայի յանդիր լրացում:

Միջանկյալ խոսքեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Դիտեցե՛ք փակագծերում առնված խոսքերը.

1. Սմբատ Ազատյանը (այդ է նրա անուն-աղջանունը) աշխորհրդի նախագահ է բնադրված:

2. Սարգիսը (միթե չես հիշում) այնտեղ էր:

3. Շուկայում (հենց նոր իմացա) միսն աժանացել է:

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Այն խոսքերը, վորոնք մտնում են ուրիշ խոսքերի մեջ, բայց բերականորեն չեն կապակցվում նրանց հետ, կամ ռա յերկրորդաբար են պարզում նրանց իմաստը, կոչվում են միջանկյալ խոսքեր:

ԿԱՆՈՆ. Միջանկյալ խոսքերն առնվում են փակագծերի կամ usorակետերի մեջ:

Ցույց տվե՛ք միջանկյալ խոսքեր հետևյալ հասկացվածների մեջ.

1. Այսպես էլին արտահայտվում Յասարի (այսուհետև մենք էլ այսպես կանվանենք մեր հերոսին) մասին նրա ընկերները:

2. Յերբ քաակուսդ չունես մանր փող (խոշորներն մասին
այն ժամանակ խոսք լինել չէր կարող), պարենի խնդրն սկսում
է շատ կարեւոր դեր խաղալ:

3. Այդ տղան, վորին «Ճանճ» ելին անվանում (խակական
անունն եղվարդ եր, վոր տվել ելին նրան հորեղբոր հիշատա-
կին), շատ ընդունակ, բայց, դժբախտաբար, ի ծնե հիվանդ քե-
րեխա յեր:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ)

4. Շատ եր սիրուն և Մարոն.

— Լամիս ե, տսում եր, կարոն.

Բերում է ինձ ամեն որ

Չամիչ, կանֆետ ու խնձոր...

(ՀՈՎՀ. ԹՈՒՄ. «Մարոն»)

Ցոյց սվիք գլխավոր ու լրացական խոսքեր ու վերջիններիս
սեռականներ.

1. Յեթե տեղիցը վեր կացավ հանկարծ
զլուխը մեխած մահակը ձեռին՝
ձեն արավ՝ կանչեց դալում շներին
ու բիրտ, վայրենի կանգնեց խնչպես սար,—
այնժամ կիմանաք, թե ինչի համար
թե գող, թե դադան, հենց դատարկ վախից,
հեռու յեն փախչում նրա փարախից:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ. «Լոռեցի Մարոն»)

2. Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
կատակի տալով թողած եր իրեն,
ուժ տալով Մարոն, ծնկեց կատաղի,
գետնեց ընկերին ու չոքեց վրըն:

3. Յեվ յերբ յերեկոն հանդարտիլ ու լուռ
սարերից իջնում, խավարն է պատում,
նրա բայաթին փողբում է տխուր,
ընկեր սարերին խոսում, գանգատվում:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ. «Անուշ»)

4. Յերբ վար, ծերունի, մեռնելու լինեմ,—
և դիտեմ յերկար չափաի ապրեմ,—

դու հրամայիր գիակա տանելու
մեր կանաչ այգին, այնտեղ, ուր յերկու
ճերմակ հակակի թփեր են աճում...

(ՀՈՎ. ԹՈՒՄ Թարգմ. «Մծիբ»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Լրացեմ հետևյալ ստորագ-
սական կապակցություններ՝ համապատասխան շարկապներով.—

Որինակ՝ ահա լեկավ այն աշակերտը, ... գնացել եր գյուղ
= վոր գնացել եր գյուղ— Մենք այն ժամանակ վեր կացանք, ...
լույսը բացվել եր= յերբ լույսը բացվել էր:

1. Այս այն գյուղն է, . . . լեռ ծնվել եմ:

2. Այդ պատանի է այն տարին, . . . լեռ ծնվել եմ:

3. Կկատարեմ այն . . . դու ցանկանում ես:

4. Նա ել դնաց այնտեղ, . . . դու ելիր գնացել:

5. Գալիս եմ այնտեղից . . . դու ելիր պալիս:

6. Վայ այն ուտելուն, . . . կերան:

7. Սև լինեմ այն որը, . . . դու ծնվելիք:

8. Այն գուշնով կնեղեմ, . . . դույնով . . . միշտ ներ-
կել եմ:

9. Ով կարդա, . . . մարդ տ:

10. Աչքն ինչ տեսնի, . . . կանի:

11. Գովեաթի արժանի յին նրանք, . . . կատարում են
իրենց պարտականությունները:

12. Ով փքանա, . . . չքանա:

13. Չեր հասկանում, . . . նրա տառն ինչ է:

14. Յես ինչ գիտեմ, . . . Սիրուն ուր է գնացել:

15. Նրան թվաց, . . . շունչը կտրվում է:

16. Վարակ հաց, . . . կաց:

17. Վարակ մեղր լինի, ճանճերն . . . կհավաքվեն:

18. Վարովհետե դու ուշացար, . . . չկարողացար գնացքին
հասնել:

19. Դեռ շատ պետք է աշխատեմք, . . . մեր նպատակին
հասնենք:

20. Գողը տնից . . . լինի, լեզն երգլից կհանի:

21. Թեև սաստիկ ցուրտ եր, . . . Մուկուշը չեր մրսում:

22. Նա այն ժամանակ այնտեղ կլինի, . . . դու ցան-
կանաս:

23. Հատանք այն տղաներին, . . . դու տեսել ես:

24. Սովորիր այնքան, . . . կարող ես:
25. Սովորիր այնպես, . . . կարող ես:

Պարզեցե՛ք հետևյալ բարդ ասացվածքները.—

1. Մեծ գործ արած կլինի նա, ով այս նամակը Հայկին հասցնի:
 2. Յես այն չեմ տեսել, ինչ վոր ուրիշներն են տեսել:
 3. Դուք ել վայելեցե՛ք այն, ինչ վոր մենք ենք վայելում:
 4. Այն գլուղացիները, վոր յերեկ արորով ելին հերկում գաշտերը, այսօր տրակտոր են բանեցնում:
 5. Ով վոր Յերեան գնա, հիդրոշներ կտեսնի:
 6. Աչքն ինչ տեսնի, այն կանի:
 7. Յերբ լույսը բացվի, ճանապարհ կընկնենք:
 8. Յերբ արևը մտնի, մենք տեղ կհասնենք:
 9. Հենց վոր վայր ընկավ, մի ճիշ արձակեց:
 10. Քանի դու ալստեղ ելիր, այդպիսի բան չեր պատահում:
 11. Մինչև Արփիկը տեղ հասավ, ամեն ինչ վերջացավ:
 12. Վորքան կարող ես, այնքան աշխատիր:
 13. Աշտը կոպիտ վարվեց, վորովհետև զայրացած էր:
 14. Մենք ամեն ջանք պետք է թափենք, վոր մեր գործն ավարտենք:
 15. Յեթե միասին աշխատենք, գործը շուտով կավարտենք:
 16. Թեև բավականին հոգնած եր, շարունակեց աշխատել:
 17. Զնայած միջոցները քիչ ելին, այնուամենայնիվ իր ցանկացածն իրագործեց:
 18. Դուցե Արշակը ծիծաղի, յեթե այս բանն իմանա:
 19. Ուր սար լինի, այնտեղ քար ել կլինի:
 20. Կարող ես կարգալ այն, ինչ վոր ուզում ես:
 21. Ֆեկավ այն կառքը, վոր գլուղ եր զնացել:
 22. Հենց վոր «արգար» դատավորն իր անողորմ դատավճիռն արտասանեց, դատապարտյալին իսկույն չոքեցրին շահի առջև:
- ԳՐՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Վերլուծեցե՛ք ստորեվ բերված բարդ ասացվածք, ցույց տալով, քե վո՛ր խոսքը վորի հետ ինչ յեղանակով է կապված, վո՛րն է ուրույն իմաստ արտահայտում, վո՛րն է լրացական խոսք յեվ լրացական խոսք այս կամ այն խոսքի իմաստն ինչպես է լրացնում.—
- Յերբ Սուրբիկը գործն ավարտեց, վեր կացավ, զգեստները

հագավ, գնաց քաղաքի մոտով հոսող գետը, ուր հաճախ լողացել էր, զգեստները հանեց, նետվեց սառնորակ ալիքների մեջ և, վորովհետև գիտեր, թե արևի ջերմությունը վորքան ոգտակար է (ուսուցչից եր լսել), մեկ-մեկ դուրս եր գալիս, գլխարկը գլուխը դնում, մերկ պտուկում ջինջ յերկնքի տակ, արևի վանա ընդունում (մարդիկ չկային մոտեցրել), նորից ջուրը նետվում, և այսպես՝ մի քանի անգամ, վորից հետո զգեստները հագավ, շտապեց դպրոց, վոր չուշանա աշխուրհդի ժողովի նիստից (նախագահն ինքն եր):

Դիտեցե՛ք այս բարդ ասացվածքի կետադրությունը:

VIII. ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՇՄՓՈՓՈՒՄ ՀԱՂԵԼՈՒՄՆԵՐՈՎ)

ա. Ստորակետ

§ 114. Դիտեցե՛ք ստորակետը (,).

Ա. Յերեանը, Թիֆլիսը, Բաղուն և Բաթումը քաղաքներ են: Յես, դու, նա Արամին տեսել ենք:

Դու սիրում ես կանաչ, կարմիր, կապույտ և մանուշակա գույն գուլները:

Բ. Բոլոր կողմերից հավաքված լինա՛ն թուրք, իտալացի, հնդիկ, վրացի, ռուս, շոտլանդացի, հայ, խուլխուղ, թաթար, կիբգիզ, չինացի:

(ԿԱՐԾԻՐ ԱՐԵՎ, «Ամենապոեմ»)

ԿԱՆՈՆ. Խոսքի մեջ հարանման իմաստով լրացումներ կամ խոսքերի բազմակի մասերն իրարից բաժանվում են ստորակետով, յեթե յե՛վ, ու ռադկապներով միացած չեն:

Դ. Սերոբ, լեկ այստեղ—Տիգրան, գնա տուն:—Իմ փոքրիկ կատուն, վաչկի, չգիտե՛ս ուր ե:—Դիրքդ տա՛ս, Սեդիկ:

ԿԱՆՈՆ. Կոչական բառեր խոսքից բաժանվում են ստորակետով, յեթե նախադաս եմ կամ վերջադաս, իսկ յեթե միջադաս եմ, յերկու կողմից առնվում են ստորակետերի մեջ:

Դ. 1. Մեր Արշակը, կարծեմ, շուկա գնաց:

2. Արամը, հենց նոր խմացա, գնացել է Յերեան:

3. Տները, ինչպես ասացի, Նախիջան ալք քաղաքում ցած լիկ չեն:

ԿԱՆՈՆ. Միջանկյալ բառերն ու միջանկյալ նախադասու-
թյուններն առնվում են ստորակետերի մեջ:

Ե. Գարունը չեկավ, վարդը փթթեց, սոխակն սկսեց դա-
լայել:—Գնացի, տեսա, վերադարձա ու պատմեցի:

ԿԱՆՈՆ. Համադաս, մտերմ միմյանց մոտիկ կարն նախա-
դասութիւնները բաժանվում են ստորակետով. վերջին յերկուսը, յերե
միացած են յեվ, ու շաղկապներով, ստորակետով չեն բաժանվում:

Զ. Յեվ գնացի, և՛ տեսա, և՛ վերադարձա:—Թե՛ գնացի, թե՛
տեսա, թե՛ վերադարձա:—Յես գնացի, և դու յեկար:

ԿԱՆՈՆ. Յերբ միշտ մնայն յենթակայով համադաս խոսքեր
կապված են յեվ, քե շաղկապներով, վար կրկնվում են համադաս
խոսքերից ամեն մեկի վրա, այդ դեպքում համադաս խոսքեր բա-
ժանվում են ստորակետով: Յերե համադաս խոսքեր կապվում են
յեվ, ու շաղկապներով, բայց տարբեր յենթակայներ ունեն, բաժան-
վում են ստորակետով:

Է. Յես յեկա, նաև դու յեկար:—Բայց յեկել է յիս, մինչև
անգամ Գրիգորն էլ եր յեկել:—Վաչ միայն յես է յիս յեկել, այլև
դու:—Մերթ նստում է յիս, մերթ կանգնում:—Յերբեմն տանն
եմ լինում, յերբեմն դպրոցում:—Նա ապուշ է, այսինքն՝ բան չի
հասկանում:—Դու մբսել ես, ուստի հիվանդ ես:—Կամ պիտի պա-
րապես, կամ պիտի խաղաս:—Պիտի դար, բայց չեկավ:—Յես կար-
դում եմ, իսկ դու գրում ես:

ԿԱՆՈՆ. Համադաս կարն ու պարզ խոսքեր, փորձն միա-
ցած են համադասական շաղկապներով, բաժանվում են ստորակե-
տով: Նամ շաղկապից առաջ ստորակետ չի դրվում, յերե բացատ-
կան նշանակութաւորքն է գործ ածվում կամ նույնութիւնն է ցույց
տալիս (Մասին կամ Արարատ):

Ը. Դնացի, վոր նրան տեսնեմ:—Յես յեկա, յերբ լուսը բաց-
վում եր:—Տեսա այն տղային, վոր հիվանդ եր:—Այն տղան, վոր
հիվանդ եր, առողջացավ:

ԿԱՆՈՆ. Բարդ ասացվածի գլխավոր յեվ լրացական մա-
սեր միացնող ստորադասական շաղկապներից առաջ ստորակետ է
դրվում: Միջադաս լրացական խոսք յերկու կողմից ստորակետերի
մեջ է առնվում:

Թ. Յերբ վար գարունը գալիս է... Ուր վար գնաս... Ինչ վար
տեսա... Ով վար տեսնի... Թե՛ վար գաս... Ճեղք վար... Իսկապես
վար...

ԿԱՆՈՆ. Յերբ վար շաղկապն ավելորդ կերպով իբրեւ բար-
մասար գործ է ածվում ով, ինչ, ուր... յեվ այլ բառերից հետո,
այդ բառերից ստորակետով չի բաժանվում:

Դիտեցե՛ք ստորակետը յեվ բացատրեցե՛ք.

Ձեզք մնաց, տեսա՛ն դարձավ,

ճայը ըստը փողերն առավ,

առավ, նստեց նավի միջին,

հասավ Մըսըր, Ձինումաչին,

Փարս, Հընդատան,

Արարատան...

Ել թանգապին քիւմանի շալ,

Ել մարդարիտ, դմուխտ ու լալ,

հնդու խուրձա, փշատ, բազան,

ինչ վոր տեսավ, աչքը սիրեց,

բոլ-բոլ առավ, նավը լցրեց:

(ՀՈՎ. ԹՈՐՄ. «Անբախտ վաճառականներ»)

Բ. ԲԱՐԲ

§ 115. Դիտեցե՛ք բարբ(՝).

Ա. 1. Արն այն, ինչ վոր կուգես—Արն՝ ինչ վոր կուգես:

2. Լսիր, քե ինչ եմ ասում—Լսիր՝ ինչ եմ ասում:

3. Յես Յերևան եմ գնում: Իսկ դու՝ Քանաքեռ ես գնում:—
Յես Յերևան եմ գնում, իսկ դու՝ Քանաքեռ:

4. Իմ ընկերներն են՝ Արամը, Սիսակը, Մուկուչն ու Շուշիկը:

5. Նախ՝ դու չար ես, չերկրորդ՝ ծուլ ես, չերկրորդ՝ անբա-
րեխիղճ ես:

6. Յերևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը՝ դառնվում է Հրազ-
դանի ափին:

7. Յես Արամին զգուշացրի՝ առանց նրան վիրավորելու:

8. Հողժողովմանի՝ դպրոցին նվիրած հողամասը մեծ է:

Բ. 1. Առում են՝ ուսին աղջիկ եր ինձ պես:

2. Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ, չեմ հասկանում՝ դե-
պի ուր...

3. Դարերի մշտնջի վրա գրում եր՝ «վեց վիլայեթ...»:

4. Սողոն հուսահատ հարցնում եր՝ «Ինչու, ինչու...»:

ԿԱՆՈՆ. Բութ դրվում է.

1. Գլխավոր յեվ լրացական խոսքերի մեջ, յերբ նրանց միացնող ստորադասական շաղկապը գեղջված է (որ.՝ *գնաց՝ նրան տեսնի*),

2. Համադաս խոսքերից յերկրորդի մեջ, յերբ մի բառ (որ.՝ *բայը*) գեղջված է (որ.՝ *յես գնում եմ տուն, իսկ դու՝ շուկա*... *դու գնում ես շուկա*):

3. Թվարկությունից առաջ (որ.՝ *իմ ընկերներն են՝ Արամը, Սիսակը*...):

4. Թվարկությունն ցույց տվող բառերի վրա (որ.՝ *նախ, ապա, առաջին, յերկրորդ և այլն*):

5. Դերբայ լրացումների յեվ խոսքի մեջ, յերբ դերբայ լրացումներն իրենց հերթին լրացումներ ունեն.

6. Կարն ուղղակի խոսքից առաջ (որ.՝ *ասաց՝ լավ, կգամ*... *կամ թե՛ լավ, ասաց՝ կգամ*):

7. Բացահայտյալից հետո յեվ բացահայտյալից ու սրան վերաբերող բառերից առաջ. որ.՝ *Տիգրանից՝ մեր այդ խելոք ու ջանասեր աշակերտից...*

Գ. Մ Ի Չ ա կ ե ս

§ 116. Դիսեցե՛ք միջակեք (·).

Ա. 1. Յերեկոյան ժամի վեցին յես հասա գլուղ. այդ ժամանակ արեն արդեն մայր եր մտնում:

2. Կամաց մի՛ գնա, վոր ուշանաս. արագ գնա, վոր հասնես:

3. Պետրոսն ասաց. «Այսոր յերեկոյան մեր տանը կլինեմ»:

Բ. 1. Ամպերը դանդաղ ուղտերի նման՝
նոր են ջուր խմած՝ ձորից բարձրանում.

քարոտ թիկունքից Չաթինդաղ լիռան
նոր և արեը պոռնգը հանում:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Անուշ»)

2. Պատասխանը կարճ և աղղու յես. փրկության միջոցը՝
մեկ. բավական չե ստեղծել մեքենաներ ու գործիքներ, բավական
չե տքնել ու չարչարվել գործարանների մեր մեջ. պետք է տեր
դառնալ այդ մեքենաներին, այդ թևավոր հզոր գործիքներին,
պետք է նրանց ծառայեցնել հանուրի, ամբողջի ոգտին:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Մեքենաներն ու շահագործվող մարդը»)

ԿԱՆՈՆ. Միջակեցով բաժանվում են.

1. Համադաս յերկար խոսքեր, վորանք վորո՞ւ ինքնուրույնապյուն ունեն (տես վերևի Ա. 1.):

2. Բարդ համադաս խոսքեր, վորանք յերկրորդական խոսքեր ունեն (տես վերևի Ա. 2.):

3. Ուղղակի խոսքերից առաջ, այսինքն՝ յերբ ուրիշի խոսքերն անփոփոխ, ինչպես ուրիշն է ասել, չակերտների մեջ են բերվում, ուղղակի խոսքի սկզբում, չակերտներից առաջ միջակե՞ս է դրվում (տես վերևի Ա. 3.):

4. Վերնագրերից հետո:

Գ. Վ ե ռ ջ ա կ ե ս

§ 117. Դիսեցե՛ք վերջակեք (:).

1. Յես գնացի, վոր նրան տեսնեմ. բայց վորովհետև տանը չեի, չկարողացա տեսնել:

ԿԱՆՈՆ. Վերջակե՞ս դրվում է լրիվ արտահայտված մեքի կամ ասացվածի վերջը:

Ե. Շ ե տ, հարցական յեվ յերկար

§ 118. Դիսեցե՛ք շեռք ('), հարցականը (°) յեվ յերկար նշանը (˘).

1. Ե՛ր, դուք, Ռոկֆելլեր, Սոփնես, Մորգան... լսե՛մք, մենք դեռ կգանք...

2. Դիտե՛ք, թե աշխարհի արգանդից
ինչքան հանճարեղ մարդիկ,
ինչքան, ինչքան կրոնավել...

Ինդել են, կան դեռ
ու կգան:

3. Արե՛, ջան իգիթ, արե՛, անիրավ...
Էլ մի՛ ուշացնի, յես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի, յես շատ եմ լացել...

ԿԱՆՈՆ. ա. Կոչականների, նրամայական բայերի յեվ կարն արտասանվող ձայնարկությունների վեա շեռք է դրվում: Յերե կոչականն ածական ունի, շեռքն անցնում է ածականին (տես վերևի որի-նակ 3):

բ. Հարց արտահայտող բառերի վրա հարցական ե դրվում (տես վերևի 1, 2):

գ. Յերկար արտասանվող բառերի, ձայնարկաբյուրների վրա յերկար կամ բացականչական նշան ե դրվում (տես վերևի 1, 2):

գ. Հակերսներ

§ 119. Դիտեցե՛ք հակերսները (α » ,, '):

1. Առաջ. «խեղճ աղա, շատ ես չարչարվում»:

2. Դաշտերում անթաղ մնաց Պողոսը—«քաջ ջանքերդար»:

Ուր ե այդ «քաջը», թող մի գուրս գա:

3. Մենք Հ. Թումանյանի «Անուշ» պոեմն ենք կարդում:—
Յես „խորհրդային Հայաստան“ եմ ստանում:—Մենք «Կինո պրո-
լետար» գնացինք:

ԿԱՆՈՆ. ա. Ուրիշ խոսքերն առնվում են հակերսների մեջ,
յեթ ուղղակի յեն բերվում, ինչպես ուրիշն ե ասել: առանց փոփո-
խելու (տես վերևի որինակ 1):

բ. Յերբ բառը հակառակ իմաստով կամ հեզմական մեքով ե
գործ ածվում, առնվում ե հակերսների մեջ (տես վերևի 2):

գ. Դրվածքների, լրագրերի, հանդեսների անունները նույնպես
հակերսների մեջ են առնվում (տես վերևի որինակ 3):

է. Կախման կետեր

§ 120. Դիտեցե՛ք կախման կետերը (...).

ա. 1. Հանկարծ մի պայթյուն... ահուկի խուճապ... չորս
կողմ գիտկներ... աջ ու ձախ փախուստ...

2. Ուղեցի մեկ... բայց չե, գեռ թող մնա, չեմ ասի:

բ. 1. Խնչ են հառաչում... են թիկ եր, մի ասե, վոր գուր-
սը հանկարծ աղմկեց եսպես... Ո՞վ ե սպանել... Մոտին... ում...
ձեր...—Անուշ, ՆՋ, Անուշ... ջուր հասցրեք, ջուր...

2. Տաղանդ ու չերգեր... ամեն, ամեն բան

մտավ նրանց հետ խավար դերեղման...

Դարձավ անապատ... ել թվ ե միում...

Ել ուրիշ պոետ մենք չենք ընդունում...

(ՀՈՎ. ԹՈՒՄ., «Պոետն ու մուսան»)

ԿԱՆՈՆ. Կախման կետեր (յերեկ կես) դրվում են.

1. Այն ժամանակ, յերբ խոսքերը, գեղջված բայերով, իրար են

հաջորդում, չափադուրյուն բողբելու կամ զգացմունք արտահայտելու
նամար (վերևի որինակ ա. 1, բ):

2. Յերբ խոսքն առկալի, կիսատ ե բողբվում ինչ-ինչ պատճառ-
ներով, յերբեմն այնպես, վոր ընթերցողը կարող ե գուշակելով հաս-
կանալ (տես վերևի որինակ 1):

ը. Բազմակես

121. Դիտեցե՛ք բազմակեսերը (...).

Մեր առջև ձգված եր դարավոր խիտ անտառ... Բան-
վորներն ու մեքենաները ճանապարհն անց ելին կացնում այդ
անտառի միջով ե ալյն:

ԿԱՆՈՆ. Բազմակես (առնվազն չորս կես) դրվում ե այն
ժամանակ, յերբ այս կամ այն գրվածքից վորելե հասված բերելիս՝
վորու կտորներ բաց ենք բողնում:

թ. Գ ի ծ

§ 122. Դիտեցե՛ք գիծը (—).

1.—Սահակ, ռւր ելիլ:

—Վահ, չգիտես. քաղաք ելի գնացել:

—Ինչո՞ւ:

—Բան-ման առնելու:

2.—Թող, կանչում են ինձ... մերս կիմանա...

—Չե, Մանուշ, քիչ ել, միքիչ ել մնա...

—Չե, թող յես գնամ... ախ, ինչ խենթ եմ յես...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Անուշ»)

3.—Ունիմ, —հալըրեց, —մի պաշտոն կամ գործ:

—Բանաստեղծ եմ յես, —ասացի հպարտ:

—Դժվար ե, —ասավ, —յերբ պարապ ե մարդ:

—Բանաստեղծ եմ յես, —կրկնեցի մեկ ել:

—Հասկացանք, —ասավ, —պարապ ես չեղել...

(ՀՈՎՀ. ԹՈՒՄ., «Պոետն ու մուսան»)

4. Անառիկ ե այդ բերդը—ամենքը գիտեն—ե դավաճանու-
թյունն ե, նենգ, ստոր նալիբյան դավաճանությունն ե այդ բեր-
դը հանձնել յեկվոր սրիկաներին:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Յերկիր Նալիբ»)

ԿԱՆՈՆ. Յերբ խոսակցություն ե տեղի ունենում յերկու անձի մեջ, յուրաքանչյուրի խոսքն պետք է նոր տողից սկսել յեվ սկիզբը գիծ դնել: Այդ ձևով դիպուկի կամ տրամախոսական ձևով ե կոչվում: Միջանկյալ խոսքեր բուն խոսքից կարող են գծերով բաժանվել կամ գիծ ու ստորակետով:

Ժ. Գծիկ կամ միության գիծ

§ 123. Դիտեցե՛ք գծիկը կամ միության գիծը (-):

ա. 1. Յերկինքը կանաչ-կարմիր ե կապել:

2. Դրանք մանր-մունր բաներ են:

3. Մենք ծուռ-մուռ ճանապարհներով գնացինք:

4. Կլոր-մլոր, սևիկ-մեիկ, աման-չաման, պարապ-սարապ:

բ. 1. Շաղկաժ կարոտ-բաղձանք,

վորպես մի թափառ բեղվին,

բլուրբլուր ճամպեր անցա,

աչք հառած դալիք հեռվին:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Նոր որերի ճամպին»)

2. Վուշ-վժւշ, Անոշ, վուշ-վժւշ, քուրվի...

3. Դե-Ա, Դե-Պետ ե այլ հսկաներ, խոլ-խոլ հսկաներ հնոց աշխարհի...

4. Բեզը ծիլ-ծիլ, բուր թիլ-թիլ են չարի...

ԿԱՆՈՆ. Միության գիծ դրվում ե.

1. Յերկու բառի միջով, վորո՞նք մի իմաստ են արտահայտում (ա. 1, բ. 1):

2. Փոփոխությամբ կրկնվող բառի բառերի մեջ (ա. 2, 3, 4.):

3. Յերեմն, նույնությամբ կրկնվող (մեծ մասամբ միավանկ) բառերի մեջ (բ. 2, 3, 4.):

Ինքներդ ասացե՛ք.

1. Յերբ են փակադժեր դրվում:

2. Յերբ ե տողադարձի նշան դրվում:

3. Յերբ ե ծանոթության նշան դրվում (*):

Բացատրեցե՛ք ստորեվ բերված հասկանքների կեցադրությունը.

Քաջքերն ել այրից դուռնա-դհուրով
ճչում են, կանչում ծանոթ ձայներով.

1.—Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
արի մեզ մոտ հարսանիք,
տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք դալի՝
սիրո՞ւն, ջահել հարսնադջիկ:

—Ինձ մոտ արի՛՝ ձվածեղ անեմ...

Ինձ մոտ արի՛՝ բլիթ տամ...

Ես քո հոքիբն... Ես քո նանն եմ,

Ես ել՝ ազիզ բարեկամ...

—Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի.

ես աղջիկը, տե՛ս, ինչ լավ ա...

տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք դալի.

տարա-նի-նա... տարա-նա-նա...

Այն ինչ Դեբետից ալքեր են թռչում,

ալիքներ յեղնում, ալիքներ ուռչում,

խավարի միջին ծփում են կայտառ՝

—Բռնեցե՛ք, փախավ Սաքոն խելագար...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Նուրի Սաքոն»)

2.—Լավ ես ասում դու, ծերունի,—

ասավ Դավիթն ալեորին,—

բաց թագավորն ուր ե հիմի,

վոր սև կապեմ նրա որին:

—Մեծ վրանում քնած ե նա,

են, վոր միջից ծուխը կելնի.

են ծուխն ել հո ծուխ չի, վոր կա,

գոլորշին ե իր բերանի:

Ասին, դեպի Մեծ վրանը

ասպանդակեց Դավիթ իր ձին,

քշեց, գնաց ու դռանը

զոռաց կանգնած արաբներին.

—Ո՛ւր ե, ասավ, ի՞նչ ե կորել,

դուրս կանչեցե՛ք՝ դա ասպարեղ,

թե մահ չունի՝ մահ եմ բերել,

զրոյ չունի՝ դրոզն եմ յես...

—Մեղիքն, ասին, քուն ե մտել,

սխալ որով պետք ե քնի.

յերեք որն ե դեռ անցկացել,

չորս որ ել կա՝ քունը առնի:

—Ի՞նչ, բերել ե աղքատ ու խեղճ
խալխին լցրել ծոփն արշուհի,
ինքը մտել վրանի մեջ՝
ոխտը սրով հանգիստ քընի՛...
Քընել-մընել չեմ հասկանում.
վեր կացրեք շուտ, դուրս գա մեղան,
ենպես դըրան քընացնեմ,
վոր չղարթնի ևլ հավիտյան:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ, «Սասունցի Դավիթը»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Կեսադուրյան նշանները բաժանվում են յեւեթ խմբի.

Ա) 1. Վերջակեց, 2. միջակեց, 3. ստորակեց, 4. բուր.—այս չորսը **տոնուրյան** նշաններ են կոչվում, վորոնցով արտահայտվում է բառերի տոնությունը կամ բաժանումը, բառերն իրար հետ չչփոթելու համար անհրաժեշտ դադարը:

Բ) 1. Շեւ, 2. բացականչական կամ յերկար, 3. հարցական.—այս յերեքը **առոգանության** նշաններ են կոչվում, վորոնցով արտահայտվում է խոսողի ձայնի առոգանությունը կամ չեղանակավորումը:

Գ) 1. Չակերտներ, 2. փակագծեր, 3. կախման կետեր կամ յերեթ կետ, 4. բազմակետ, 5. անշատան գիծ, 6. միության գիծ, 7. տղադարձի նշան, 8. ծանոթության նշան—այս ութը **բացահայտության** նշաններ են կոչվում, վորոնք գրվածքի միտքը գլխավորապես տեսողությամբ են պարզում, բացահայտում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. 1) Ճիշտ են գրված ստորակետերը հետևյալ խոսքերի մեջ՝ յեսմի արծաթե, գեղեցիկ ժամացույց ունեմ,—բանաբեռցի, կոշկակար Մուկուչը մեզ մոտ էր,—գարնանային, գեկեցիկ որ էր:

ՏԵՂԵԿԱՆՔ. Միևնույն բառի տարբեր իմաստով վերադիր լրացումներն իրարից ստորակետերով չեն բաժանվում. «արծաթե գեղեցիկ ժամացույց» կտպակցության մեջ արծաթե և գեղեցիկ բառերը վերադիր են ժամացույց բառին. արծաթե բառը ժամացույցի ինչ նշանից պատրաստված լինելն է ցույց տալիս, իսկ գեղեցիկ բառը ժամացույցի վորակն է ցույց տալիս: Այդպես նաև՝ բանաբեռցի և կոշկակար, գարնանային և գեղեցիկ—նույն իմաստով վերադիրներ չեն, ուստի այդ վերադիրներն ստորակետերով բաժանել չի կարելի:

2) Ի՞նչպես և փոփոխվում խոսքերի իմաստը ստորակետերը տեղափոխելով:

I. Չի կարելի սպասել, Աշոտին, Սահակին շուտ գտեք, արձանագրությունը բերեք:

II. Չի կարելի սպասել Աշոտին, Սահակին, շուտ գտեք արձանագրությունը, բերեք:

III. Չի կարելի սպասել Աշոտին, Սահակին շուտ գտեք արձանագրությունը բերեք:

I. Տեսեք նախագահին, և քարտուղարին հայտնեցեք գրածս:

II. Տեսեք նախագահին և քարտուղարին, հայտնեցեք գրածս:

III. Տեսեք, նախագահին և քարտուղարին հայտնեցեք գրածս:

Դիտեցե՛ք նետեվյալ ասացվածքի կեսադուրյան փոփոխումից առաջացած իմաստի փոփոխությունը.

I. Խնդրում եմ Արամին՝ ների ինձ, մի գիրք նվիրի, տղայիս դպրոց ուղարկեմ:

II. Խնդրում եմ՝ Արամին ների, ինձ մի գիրք նվիրի, տղայիս դպրոց ուղարկեմ:

III. Խնդրում եմ Արամին՝ ների ինձ, մի գիրք նվիրի տղայիս, դպրոց ուղարկեմ:

I. Լուսժողկոմատից գրեցին Կենտգործկոմ, հայտնեցին նախաշվի մասին, նոր տեղեկություն ստացան:

II. Լուսժողկոմատից գրեցին, Կենտգործկոմ հայտնեցին, նախաշվի մասին նոր տեղեկություն ստացան:

I. Լուսժողկոմատի՝ դպրոցին հատկացրած շենքը:

II. Լուսժողկոմատի դպրոցին հատկացրած շենքը:

Հ Ա Ր Ց Ե Ր

(Սմբողջ գասերթացի կրկնության համար)

Ա.

- I. 1. Ի՞նչ է խոսքը կամ նախադասությունը:
2. Ցույց տվեք նախադասության բաղադրիչ մասերը:
3. Ի՞նչ է բառը, վանկը, հնչյունը, տառը:
4. Քանի՞ տեսակ են հնչյունները, տառերը:
- II. 5. Ի՞նչ է յերկրարբարը:
6. Յերբ է բառի սկզբում և լավում, բայց չի գրվում:
7. Յերբ է բառի մեջ և գրվում:

8. Յերբ և բառավերջի ը-ն ն-ի փոխվում, և ընդհանառակը:
 9. Ի՞նչպես ենք բառը վանկերի բաժանում:
 10. Բացատրեցեք տողագրաբնի և տողագրաբնի կանոնները:
 11. Ի՞նչ բաղաձայնացիք առաջ գրվում են ու, ինչ բաղաձայններից առաջ—ր:
- III.
12. Բառերը կազմությամբ քանի՞ տեսակ են լինում:
 13. Վճիռ բառերն են պարզ կոչվում, վճիռ բառերը—բարդ և վճիռ բառերն—ածանցավոր:
 14. Ի՞նչ նախածանցներ գիտեք և ինչ վերջածանցներ:
 15. Ի՞նչ միջածանցներ գիտեք:
 16. Որինակներով բացատրեցեք այս կամ այն նախածանցի՝ բառին տված նշանակությունը:
 17. Վորո՞նք են բացասական նախածանցները:
 18. Վորո՞նք են նվազական վերջածանցները:
 19. Ի՞նչ ածանցյալ և իզական սեռի իմաստ արտահայտող բառ ստացվում:
 20. Աղբանուկ ցույց տվող ի՞նչ ածանցներ գիտեք:
 21. Տեղ ցույց տվող ի՞նչ ածանցներ գիտեք:
 22. Բարդ բառի գլխավոր իմաստը բարդության վճիռ մասի մեջ է, և ի՞նչ կազմություն ունեցող բառեր բացառություն են կազմում:
 23. Ի՞նչ է հոգակալը և յերբ էլ գրվում այն:
 24. Ի՞նչ դեպքում է հոգակալը փոխվում:
 25. Ի՞նչ է արմատական բառ և ի՞նչ է արմատ:
- IV
26. Վճիռ բառերն են նույնանիս կոչվում:
 27. Վճիռ բառերն են հոմանիս կոչվում:
 28. Վճիռ բառերն են նույնանուն կոչվում:
 29. Վճիռ բառերն են հականիս կոչվում:
 30. Ամեն մի բառ, արդյոք, մի՞ նշանակություն ունի միայն, թե՞ միևնույն բառը տարբեր առումով կարող է ունենալ: Ցույց տվեք որինակներով:
- V
31. Բառերն ըստ նշանակության քանի՞ տեսակ են լինում, կամ ի՞նչ «մասունք բանի»-ներ գիտեք:
 32. Ի՞նչ է գոյական անունը և ինչ տեսակներ ունի այն:
 33. Ի՞նչպես են գրվում հատուկ անունները և ինչպես—հասարակ անունները:
 34. Քանի՞ թիվ ունեն գոյական անունները:
 35. Հոգնակի կազմելու համար ի՞նչ ենք աշխատում և յերբ:

36. Բացատրեցեք՝ ինչպես ենք հոգնակի կազմում այն բարդ բառերից, վորոնց յերկրորդ բաղադրիչ մասը միավանկ բառ է (որինակ՝ դասադիրք, քարակույտ, անձրեհաշուր, հողագործ, մարդակեր, սևամորթ և այլն):
37. Յերբ ենք այս դեպքում եր արելացնում և յերբ—ներ:
38. Գոյականները փոփոխվող բառեր են, թե՞ անփոփոխ:
39. Ի՞նչ է կոչվում գոյականների փոփոխությունը:
40. Ի՞նչ է կոչվում գոյականի ամեն մի փոփոխված ձևը:
41. Քանի՞ հոլով ունի գոյականը:
42. Ի՞նչ նորք գիտեք: Ի՞նչ նշանակություն կարող են ունենալ այդ հոդերը:
43. Վորո՞նք հոլով ի՞նչ բառերի վրա չեն գրվում:
44. Խոսքեր կազմեցեք, վորոնց մեջ ցուցական, ստացական, դիմորդ և վորոշող հոդեր լինեն:
45. Ի՞նչ է դերանունը և ինչ՞ով է տարբերվում գոյական առումներից:
46. Ի՞նչ տեսակի դերանուններ գիտեք:
47. Դերանունները փոփոխվող են, թե՞ անփոփոխ:
48. Ի՞նչ է կոչվում դերանունների փոփոխումը:
49. Քանի՞ հոլով ունեն դերանունները:
50. Ի՞նչ է ածականը և ի՞նչ տեսակներ ունի այն:
51. Ի՞նչպես են կիրառվում ածականներն առանց գոյականի:
52. Հատկություն ի՞նչ առիթուններ գիտեք:
53. Ի՞նչ է բայը:
54. Բայերը քանի՞ թիվ ունեն, քանի՞ դիմք, քանի՞ ժամանակ, քանի՞ չեղանակ:
55. Ի՞նչ է ցույց տալիս բայի դիմքը, ժամանակը, չեղանակը:
56. Բայերը փոփոխվող բառեր են, թե՞ անփոփոխ:
57. Ի՞նչպես է կոչվում բայերի փոփոխումը:
58. Քանի՞ ժամանակ և քանի՞ ձև ունեն՝ սահմանական չեղանակը, չեղանակի չեղանակը, հարկադրականը, ըղձականը, հրամայականը:
59. Ի՞նչ է դերբայը և ինչ՞ դերբայներ գիտեք:
60. Բացատրեցեք դերբայների կազմությունը:
61. Ի՞նչ է մակբայը և ի՞նչ կիրառություն ունի այն:
62. Ի՞նչ տարբերություն կա մակբայների և ածականների մեջ:

63. Մակբայները փոփոխվող բառեր են, թե՞ անփոփոխ:
64. Ի՞նչ է կապը և քանի՞ տեսակ է լինում այն:
65. Ի՞նչ է իսկական կամ տնիսական կապ:
66. Փոփոխվող, թե՞ անփոփոխ բառեր են կապերը:
67. Ի՞նչ և ռադկապը: Փոփոխվող է, թե՞ անփոփոխ:
68. Ի՞նչ է ձայնադիտությունը: Փոփոխվող է, թե՞ անփոփոխ:
69. Առհասարակ «անփոփոխ» կոչված բառերը յեբրե են փոփոխվում հայերենում:
70. Ի՞նչ նշաններ են կիրառվում լեզվի մեջ:
71. Վերոնք են՝ արոհություն, առողջանություն և բացահայտություն նշանները:

Բ.

- VI. ա. 1. Ի՞նչ է խոսքը կամ նախադասությունը:
2. Ինչո՞ւ բայը մենակ կարող է խոսք կազմել, իսկ մյուս բառերը՝ չոչ:
3. Խոսքի մեջ վեր բառերն են կոչվում՝ լրացումներ, կապակցական բառեր, ձայնադիտություններ (խոսքից դուրս մնացող, զգացմունք կամ կամք ցույց տվող բառեր):
- բ. 4. Լրացման ի՞նչ տեսակներ գիտեք:
5. Բայի գոյական լրացումներն ի՞նչ են ցույց տալիս:
6. Ի՞նչ է յենքական և ի՞նչպիսի խոսքերն են անյենքակա խոսքեր կոչվում:
7. Ի՞նչ է կրող լրացումը:
8. Կրող լրացման նկատմամբ բայերն ի՞նչ խմբերի յեն բաժանվում և ի՞նչ սեռ ունեն:
9. Ի՞նչպես կարելի չե ներգործական բայերից պահանջական բայեր կազմել:
10. Ի՞նչպես կարելի չե ներգործական բայերից կրավորական ստանալ:
11. Ի՞նչպես կարելի չե չեզոք բայերից պատճառական բայեր ստանալ:
12. Կարելի՞ չե ներգործական բայերից չեզոք բայեր ստանալ:
13. Ի՞նչ են ցույց տալիս բայերի պարագայական լրացումները:
14. Վեր բառերն են կոչվում լրացման լրացումներ:
- գ. 15. Ի՞նչ կիրառություն ունի ուղղական հոլովը—բուն ուղղականը, հայցական-ուղղականը, կոչական-ուղղականը:

16. Ի՞նչ կիրառություն ունի ճրական հոլովը—սեռական-տրականը, հայցական-տրականը, բուն տրականը:
17. Ի՞նչ կիրառություն ունեն՝ բացառական հոլովը, գործիականը, ներգոյականը:
- դ. 18. Ի՞նչ կապեր կամ կապական բառեր գիտեք և ի՞նչ է նբանց դերը:
- ե. 19. Ի՞նչպես են համաձայնում բայը և յենթական:
20. Ի՞նչ թիվ է դրվում բազմակի յեզակի յենթականների բայը:
21. Ի՞նչ թիվ է դրվում բազմակի հոմանիշ յեզակի յենթականների բայը:
22. Ի՞նչ թիվ է դրվում հավաքական իմաստ ունեցող յեզակի յենթականի բայը:
23. Ի՞նչ թիվ է դրվում մեկից ավելի քանակ ցույց տվող վերադիր ունեցող՝ յեզակի յենթականի բայը:
24. Բացատրեցեք գոյականի և իր ածական վերադիր համաձայնությունը:
25. Բացատրեցեք գոյական անվան և դերանվան համաձայնությունը:
- գ. 26. Բացատրեցեք վորոշող նոդի կիրառությունը:
27. Անվան ածական, կամ ստացական վերադիրն ի՞նչ դեպքում է ը կամ ն հոդով գործածվում:
28. Բացատրեցեք բառերի շարադասությունը նախադասություն մեջ:
29. Ի՞նչ է սովորական շարադասություն և ի՞նչ է երջում:
30. Ի՞նչ կարգով են դասավորվում բառերը սովորական շարադասության ժամանակ, և ի՞նչն է լինում պատճառ այդ սովորական շարադասությունը շոռ տալու:
31. Ի՞նչ դեպքում հայերենում շրջում չի կարելի անել և ինչո՞ւ:
- VI. 32. Ի՞նչ է ասացվածը և քանի՞ տեսակ է լինում այն:
33. Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքերն ի՞նչպես են կապվում իրար հետ քերականորեն:
34. Ի՞նչ է համադասություն և ի՞նչ է ստորադասություն:
35. Ի՞նչպիսի խոսքն է կոչվում համառոտ և ի՞նչպիսի խոսքն՝ ընդարձակ խոսք:
36. Յերբ է խոսքը դբական կոչվում և յերբ՝ բացասական:

37. Խնչպիսի հարցական խոսքն է կոչվում նախասանական խոսք:
38. Խնչ իմաստ ունեն դրական ճարտասանական խոսքերը և ինչ իմաստ—բացասականները:
39. Կազմեցեք բարդ ասացվածներ համադասական շաղկապներով:
40. Խնչ է ռադկապավոր կապակցություն և ինչ է անռադկապ կապակցություն:
41. Կազմեցեք բարդ ասացվածներ ստորադասական շաղկապներով:
42. Ստորադասական կապակցության դեպքում վեր խոսքն է կոչվում գլխավոր խոսք և վերը՝ յերկրորդական:
43. Յերկրորդական խոսքերի ինչ տեսակներ գիտեք:
44. Յերկրորդական խոսքերը գլխավոր խոսքի վեր բառերի իմաստն են լրացնում:
45. Կազմեցեք յերկրորդական յենթակա խոսքեր, խնդիր խոսքեր, պարագայական խոսքեր (տեղի, ժամանակի, վորակի, քանակի, հիմունքի) վերադիր խոսքեր:
46. Որինակներով ցույց տվեք, թե ինչ կերպ կարելի չե յերկրորդական խոսքեր ունեցող բարդ ասացվածը պարզել:
- VII. 47. Որինակներով ցույց տվեք, թե սրոնական նշաններից վերը յերբ ենք կիրառում—ստորակետը, բութը, միջակետը, վերջակետը:
48. Որինակներով բացատրեցեք առոգանության նշանների՝ շեշտի, բացականչական նշանի և հարցականի կիրառությունը:
49. Բացատրեցեք որինակներով, թե յերբ ենք դնում՝ չափերտներ, փակագծեր, կախման կետեր, բաղմակետեր, գիծ, գծիկ, տողադարձի նշան, նախադասության նշան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0248289

7291

